5. Ստեղծել Եվրոպայում որակավորումների մակարդակների նոր մետաշրջանակ

Համեմատաբար հեշտ կլինի սահմանել հղման մակարդակների/աստիճանների համակարգը՝ օգտագործելով ավելի վաղ նկարագրված հիմնական միջազգային հղման մակարդակների համակարգերը: Այնուամենայնիվ, մինչդեռ սա կնպաստի այս համակարգերի հետ կապված փոխադարձ վստահության գոտիների (ՓՎԳ) ձևավորմանը, հավանականությունը մեծ է, որ տարբեր երկրների կողմից բնութագրիչների թարգմանության/վերծանման հետ կապված տարբերությունների, ինչպես նաև մասնագիտական կրթության և արհեստագործության բնույթի հանդեպ եղած նրբանկատության պակասի (մասնավորապես սովորելու տեսակետից տարբերության առումով) արդյունքում կարձանագրվի լարվածության աճ: Սրան հավելենք նաև այն փաստը, որ հղման մակարդակները անհրաժեշտ են՝ ապահովելու կրեդիտների փոխանցման և կուտակման ֆունկցիան, և ակնհայտ է, որ կարիք կա փնտրելու ավելի գործնական և տեսականորեն հիմնավորված հղման մակարդակներ: Իր պոտենցիալ օգտագործման դեպքում հղման մակարդակների շրջանակի հիմնավորումը ապահովում է գաղափարների տրամաբանական հոսքը նպատակից մինչև դիզայն: Վերջիններս սույն հետազոտության հիմնաքարն են հանդիսանում: ՏԱԽ-ը (տեխնիկական աշխատանքային խումբ) կկարողանա հստակեցնել գործածումների առաջարկվող շղթան և նախանշված շահագրգռ կողմերի շրջանակը: Այն միաժամանակ ի վիճակի կլինի ճշգրտել դիզայնի ընդհանուր գծերը և բացահայտել այս հստակեցումների ազդեցությունը հղման մակարդակների առաջարկվող մոդելի վրա այնպես, որ տվյալ դիզայնը գործածելի լինի:

Ինչի՞ համար կարող է օգտագործվել հղման մակարդակների եվրոպական շրջանակը: Ընդունված տեսակետն այն է, որ այն կդառնա ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգը (ECVET) և կընդգրկի բարձրագույն կրթության մակարդակների շրջանակը: Հնարավոր է, որ հղման մակարդակների նման շրջանակի առավել լայնածավալ գործածություն լինի: Այս շրջանակի նպատակն ավելի մանրամասնորեն նկարագրելու համար անհրաժեշտ է ավելի խորությամբ ուսումնասիրել ինչպես առավել հատուկ գործածության, այնպես էլ՝ ընդհանուր գործածման դեպքերը: հղման մակարդակների եվրոպական շրջանակը կարող է պատասխանել ստորև ներկայացված հարցերին: Այս հարցերը կարող են տրվել սովորողների, ուսուցում իրականացնողների կամ սոցիալական գործընկերների կողմից:

5.1. Հարցեր պոտենցիալ օգտագործողներից

(ա) Եթե մարդիկ պատրաստվում են աշխատել Եվրոպայում, ինչպե՞ս մենք պետք է աջակցենք փոխանցմանը տարբեր երկրների գործատուներին, ուսուցում իրականացնողներին և ինստիտուտներին:

(բ) Նոր Եվրոպական Միությունում այժմ կան 25 երկրներ, նրանց ՄԿՈՒ համակարգերը տարբեր են: Կա արդյո՞ք մի հենանիշ, որ կարող է օգտագործվել դրանք հասկանալու և համեմատելու համար:

(գ) Ես ուզում եմ ընտրել որոշ թիրախներ՝ զարգացնելու տրանսպորտային արդյունաբերության աշխատուժը: Ինչպիսի՞ միջազգային չափանիշներ/հենանիշներ են առկա ինձ համար:

(դ) Ես ուզում են պատրաստել խորհրդատվական փաթեթ այն մարդկանց համար, ովքեր ցանկություն ունեն աշխատել կամ սովորել արտերկրում: Ինչպիսի՞ բնութագրիչներ կարող եմ օգտագործել՝ նկարագրելու ՄԿՈՒ համակարգերը:

(ե) Ես աշխատեցնում եմ մի խոշոր բիզնես ընկերություն և ցանկանում եմ սկսել մի նոր ուսուցման/վերապատրաստման ծրագիր հատուկ մակարդակում և հրավիրել տարբեր երկրներից մարդկանց՝ դրան մասնակցելու համար: Ինչպե՞ս ես դա ճիշտ անեմ:

(զ) Այս դիմորդն ուսուցում է ստացել այլ երկրում: Ի՞նչ մակարդակի է համապատասխանում այդ ուսուցումն այս երկրում:

(է) Կրեդիտների քանի՞ միավոր պետք է տամ այլ երկրում ստացած այս տիպի և տևողության ուսուցման և փորձառության համար:

(ը) Այս մասնագիտական մարմինը ճանաչում է այլ երկրներում շնորհված որոշ որակավորումներ և ուսուցում: Մենք կուզենայինք վստահ լինել, որ կճանաչվի ավելին: Ինչպե՞ս կարող ենք աշխատել այլ երկրների մասնագիտական մարմինների հետ, որպեսզի վստահ լինենք, որ որակավորմներն ու ոսուցումը ճիշտ տիպի ու որակի են:

(թ) Ես պատրաստում եմ մի դասընթաց և ուզում եմ այնպես անել, որ դա առավելագույն ճանաչում գտնի այլ երկրներում: Ինչպե՞ս դա անեմ:

(ժ) Ես ունեմ որակավորում և ցանկանում եմ աշխատել արտերկրում: Դա ինձ կօգնի՞:

(ի) Ես ունեմ որակավորման որոշ միավորներ (մոդուլներ) և ամբողջական որակավորման համար ուզում եմ սովորել այլ երկրում: Արդյո՞ք նրանք հաշվի կառնեն իմ ունեցած միավորները:

(լ) Ես արտերկրում ձեռք եմ բերել որոշ աշխատանքային փորձ և ուզում եմ դրա համար կրեդիտ վաստակել, որպեսզի կարողանամ անցնել ուսումնառության կամ աշխատանքի: Իմ աշխատանքի համար կստանա՞մ արդյոք կրեդիտ:

(խ) Ես արհեստի հմտություններ ունեմ և ուզում եմ բարելավել իմ ընդհանուր կրթությունը: Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք իմ գիտելիքները բավարար են համալսարանի որևէ դասընթացի կրեդիտ ստանալու համար:

(ծ) Ես ուզում եմ մարդիկ աշխատանքի ընդունել և ունեմ որոշ դիմորդներ օտարերկրյա որակավորումներով: Որտեղի՞ց ստանամ օգնություն:

(կ) Արդյո՞ք այլ երկրի մասնագետ-էլեկտրիկը կատարում է նույն աշխատանքը ինչ՝ այս երկրինը:

(հ) Ինչպե՞ս համեմատեմ այս երիտասարդ կնոջը (այլ երկրից), ով դիմում է իր առաջին աշխատանքի համար, այս երկրի դիմորդի հետ:

(ձ) Մենք ունենք աշխատանքային (զբաղմունքների) որակավորումների և միավորների ազգային համակարգ: Ինչպե՞ս կարելի է նրանք համամեմատել այլ երկրների որակավորումների/կամ միավորների հետ:

Նմանատիպ հարցերը հաշվի առնելով՝ հնարավոր է ստեղծել, փոխակերպել որոշ հիմքեր հղման մակարդակների համար: Հաջորդ փուլը ցուցակը խտացնելն է՝ դարձնելով այն տարբեր նպատակների

համար ծառայող կատեգորիաների շարք: Վերոնշյալ հարցերն օգտագործելով՝ կարելի է եզրահանգել, որ հղման մակարդակի եվրոպական շրջանակի իմաստը/նպատակը հետևյալն է՝

(ա) միջոց՝ հասկանալու Եվրոպական Միության տարբեր ՄԿՈՒ համակարգերի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ապահովող համակարգը,

(բ) ճանապարհ՝ զարգացնելու եվրոպական ՄԿՈՒ համակարգի համընդհանրացման տենդենցը, որպեսզի հնարավորինս կրճատվեն մարդկանց, ձեռնարկությունների և հմտությունների շարժունակության խոչընդոտները,

(գ) հիմք՝ զարգացնելու փոխադարձ վստահության գոտիներ (ZMTs) երկրի սահմաններից դուրս և հնարավոր այդպիսիք երկրի ներսում՝ տարբեր ոլորտների միջև,

(դ) միջոց՝ կառուցելու ոլորտի գործունեությունն այնպես, որ այն դառնա համահունչ և ինտեգրված այլ ոլորտների աշխատանքի հետ,

(ե) հիմք՝ համարժեք դարձնելու որակավորումները, ուսուցման և աշխատանքային փորձը երկրների միջև,

(զ) հիմք՝ ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգի (ECVET) համար:

(է) միջոց՝ փոխկապակցելու ՄԿՈՒ-ն և բարձրագույն կրթությունը մեկ համընդհանուր որակավորումների շրջանակում,

(ը) աջակցել թիրախների ընտրությանը և միջնաժամկետ պլանավորմանը,

(թ) աջակցել Եվրոպայում ՄԿՈՒ իրականացնողների միջև համագործակցությանը,

(ժ) ապահովել միջոցներ՝ ճանաչելու ուսումնառության առաջընթացը՝ ինչպես մակարդակների միջև, այնպես էլ՝ դրանց ներսում:

Եվրոպական հղման մակարդակների մշակման հաջորդ փուլը պետք է անդրադառնա այն մարդկանց խմբերին, ովքեր օգտագործելու են դրանք նշված նպատակներից մեկի կամ մի քանիսի համար: Այս խմբերի նախանշման գործընթացը խիստ կենտրոնանում է հաճախորդի վրա և սկսում է ձևավորել փոխադարձ վստահության գոտիներ, որոնք հիմնված են հղման մակարդակների և ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգի (ECVET) վրա: Հետազոտությունները բազում անգամներ ցույց են տվել, որ առանց այս շահառուների շատ հավանական է, որ մշակումը կլինի սահմանափակ, երկարատև և խիստ կենտրոնացած խնդիրների հաղթահարման և շահերի տարբերակման վրա: (Սելին, 2002; Քոուլզ, 2004).

Մեր սպառողները (օգտագործողները) հավանաբար կլինեն.

(ա) եվրոպական քաղաքականություն մշակողները,

(բ) ազգայինքաղաքականություն մշակողները (նախարարություններում, կառավարական կազմակերպություններում և խոշոր անկախ շահառուները),

(գ) տարածաշրջանային քաղաքականություն մշակողները,

(դ) համալսարանները և այլ բուհեր,

(ե) մասնագիտական մարմինները (սեկտորներ և առևտրային միություններ),

(զ) վերլուծաբանները (օրինակ՝ աշխատանքային շուկայի հետազոտողները),

(է) գործատուները,

(ը) ուսուցում/վերապատրաստում իրականացնողներ, ՄԿՈՒ կառավարիչները, պլանավորողներն ու ընդունողները,

(թ) այլ երկրում աշխատանքի կամ դասընթացների համար դիմորդները:

5.2. Հղման մակարդակների շրջանակի յուրահատուկ բնույթը

Comment [S1]: Հենքային մակարդակների շրջանակի յուրահատուկ բնույթը

Մինչ այս կետը մենք խոսել ենք առկա շրջանակների, նոր շրջանակիի պոտենցիալ գործածության, նպատակների սահմանման և հիմնական խմբերի նախանշման մասին: Այս փուլում շատ կարևոր է նշել, որ եվրոպական հղման մակարդակները ավելին ունեն անելու, քան զուտ օգնելու տեղավորել որակավորումները, ուսուցման վկայականը և նախկին փորձը ինչ-որ կոնկրետ մակարդակի վրա: Շրջանակը պետք է նաև կարողանա աջակցել կրեդիտների հատկացմանը և թույլ տա նրանց փոխանցումը առաջադիմությունը ճանաչող այլ համակարգեր: Այս լրացուցիչ նպատակի հիմնական տարբերությունն այն է, որ մուտքի նյութը, այսինքն այն նյութը, որը ներառում է տեղեկատվություն մի երկրում փորձի կամ առաջադիմության մասին, կարող է լինել ավելի քիչ բովանդակային, քան ամբողջ որակավորումը կամ ուսուցման ողջ ընթացքը: Դա կարող է լինել մոդուլի կամ վերապատրաստման մակարդակի համապատասխան կամ էլ գնահատման կամ կարճաժամկետ փորձի մակարդակի: Նմանատիպ փոքր վկայությունները, որ պետք է կապվեն հղման մակարդակների հետ կարող է պահանջներ ներկայացնեն հղման մակարդակների բնութագրիչների մասով: Դրանք կարող է պահանջեն՝

(ա) ՄԿՈՒ-ն առնչվող առաջադիմության/նվաճումների առավել մանրամասն նկարագրություն,

(բ) ուղղությունների առավել լայն շղթա, որոնց առաջադիմությունը/նվաճումները կարող են կապվել որոշակի մակարդակում,

(գ) ուսուցման, առաջադիմության և փորձի մասին ընդունելի նվազագույն ծավալների ամբողջական ձևակերպում,

(դ) ավելի լայն ծրագրի կամ փորձի որոշ հավաստիք, որի մի մասն է միայն տվյալ հավաստիքը,

(ե) կրեդիտների կուտակման գործընթացի թույլտվություն:

Կրեդիտների միավորները (մասնակի որակավորում), որոնք նաև վերածվում են լիարժեք որակավորման և եվրոպական հղման մակարդակների, պետք է համահունչ լինեն այն առումով, որ թույլ տան համապատասխանեցնել թե՛ մասնակի, թե՛ լիարժեք որակավորումները: Օրինակ, հնարավոր է լինի այպիսի դեպք, երբ առանձին վերցված միավորի/դասընթացի/առարկայի արժեքը շատ ավելի բարձր լինի, քան նրա համամասնությունը այն որակավորման ամբողջության մեջ, որի մասն է այն հանդիսանում: Խնդիրներ կարող են առաջանալ նաև հիմնական և լրացուցիչ միավորներին/առարկաներին կրեդիտներ տալու հետ կապված: Կարող է միավորների զուգակցման անհրաժեշտություն առաջանալ: Կրեդիտների հետ առնչվող այս հարցերի մեծ մասը, այնուամենայնիվ, սույն հետազոտության սահմաններից դուրս են:

Հղման մակարդակների եվրոպական շրջանակի երկրորդ հատկանիշը, որը պահանջում է հստակեցում, այն է, թե ինչքանով է ակնկալելի, որ այն որոշիչ դեր կխաղա որակավորման զարգացման գործում: Շատ երկրներում, որոնք ունեն որակավորումների հրապարակված շրջանակ, այդ շրջանակի հիմնական նպատակը որակավորման համակարգը թափանցիկ դարձնելն է և որակավորումների ու առաջադիմության ուղիների միջև կապը հստակ ցույց տալն է (SCQF, 2003 և Հարավ Աֆրիկյան որակավորումների շրջանակ, մանրամասները՝ http://saqa.org.za): Սպառողների համար որակավորումների համակարգը թափանցիկ դարձնելու ընթացքում երբեմն անխուսափելի է, որ որոշ գործող որակավորումների վրա կգործադրվի ճնշում, որպեսզի վերջիններս հարմարվեն նոր շրջանակի միջավայրին (տես մանրամասները http://www.nqai.ie և http://www.qca.org.uk): Որոշ դեպքերում նոր որակավորումները ձևավորվում են շրջանակի պահանջների հիման վրա (տես http://www.nzqa.govt.nz): Հղման մակարդակների եվրոպական շրջանակի պարագայում կա հստակ փաստարկ գոյություն ունեցող ՓՎԳ-ի վրա հիմնվելու, և այդպիսով համապատասխանեցնելու ՓՎԳ-ների գոյություն ունեցող ակնկալիքները: Այնուամենայնիվ, անհավանական է, որ հնարավոր է անթերի «համապատասխանեցում» գոյություն ունեցող ՓՎԳ-ին յուրաքանչյուր երկրում և սեկտորում, ուստի որոշակի հարմարվողականության անհրաժեշտությունը անխուսափելի է: Նաև ճնշումներ կան այն ուղղությամբ, որ պետք է նայել հեռուն և հղման մակարդակները կառուցել այնպես, որ դրանք կարողանան զինել այնպիսի հմտություններով, որ պահանջելու է ապագա եվրոպական աշխատանքային շուկան: Մինչդեռ անհավանական է պահանջել փոփոխություններ մի շարք մակարդակներում, հավանական է, որ հնարավոր է որոշակի ճնշումով ստիպել տարբերակելու այն հղման մակարդակները, որոնց ուսուցման պահանջներն ու աշխատանքային փորձը շատ արագ փոփոխվում են, օրինակ ՏՀՏ-ների վրա հիմնված ոլորտները:

ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգի (ECVET) հստակ նպատակն է աջակցել ուսուցման կազմակերպիչների, ուսուցանողների և սովորողների միջև համագործակցությանը ազգային սահմաններից դուրս: (տես ՏԱԽ սահմանումը ECVET-ի ֆունկցիաների մասին http://communities.trainingvillage.gr/credittransfer?go=z988442): Համագործակցությունը կախված կլինի մակարդակների ընդհանուր ընկալումից և նրանց նշանակությունից: Դա նաև կնշանակի, որ կա տարբերությունների մասին քննարկումների և բանակցությունների որոշակի շրջանակ: Սա նշանակում է, որ եվրոպական հղման մակարդակների ցանկացած մակարդակի բնութագրիչ պետք է սահմանվի՝ խրախուսելու անդրադարձ այն այն ձևերին, որով ազգային որակավորումները կամ ուսուցման/վերապատրաստման կառուցվածքները համապատասխանում են այս բնութագրիչներին: Եզրակացնենք, որ եվոպական հղման մակարդակները պետք է միանգամից ճանաչեն գործող փորձը և պոտենցիալ սպառողներին հնարավորություն տան սահմանված մակարդակների հետ հարմարվելու, սակայն, միաժամանակ, նրանք պետք է ստեղծեն մի մեխանիզմ, որը հստակ և ապագայամետ եվրոպական որակավորումների և ուսուցման կառուցվածքների հետ զուգահեռ հաշվի է առնում փոփոխության և զարգացման անհրաժեշտությունը:

ՓՎԳ-ի բնույթին և գործող շրջանակներին վերաբերող քննարկումների բոլոր էլեմենտները կարող են այժմ բերվել՝ գործի դնելու հղման շրջանակի հնարավոր տարբերակները:

5.3. Հնարավոր կառուցվածքներ

Արդեն նախանշած ունենալով հղման մակարդակների նպատակները, շահառուներին և որոշ այլ կարևոր հարցեր, մենք կարող ենք ավելի խորությամբ ուսումնասիրել հղման մակարդակի շրջանակի սահմանման տարբերակները:

Հղման մակարդակի շրջանակը պետք է ունենա որոշակի որակներ, եթե այն ուզում է հասնել իր նպատակին: Օրինակ այն պետք է.

(ա) լինի դյուրընկալ իր էության, հնարավորությունների և դրանց սահմանափակման առումով,

(բ) հնարավոր դարձնի ՓՎԳ-ի զարգացման աճը, որպեսզի այն հիմնվի ներկայիս պրակտիկայի վրա և հաշվի առնի այն ուղիները, որով հղման մակարդակի շրջանակները դառնում են հանրաճանաչ և ազդեցիկ,

(գ) համահունչ լինի գործող, լայնամասշտաբ գործածվող շրջանակների հետ,

(դ) ծածկի ՄԿՈՒ բոլոր ասպեկտները՝ վերապատրաստման ապահովում, որակավորումների զարգացում, աշխատանքային գիտելիքների և փորձի գնահատում և որակավորում,

(ե) լինի հատկապես նպաստող՝ կապելու գնահատման միավորը մակարդակի հետ,

(զ) ի վիճակի լինի առաջարկելու իմաստալից նախնական կետ տարբեր ՄԿՈՒ համատեքստերում, ինչպիսին են մասնագիտական ոլորտները,

(է) ճանաչի սոցիալական իրականությունը աշխատաշուկայի պայմանների և առավել լայն սոցիալական նպատակների առումով և ի վիճակի լինի զարգանալու՝ փոփոխության հրամայականին դիմագրավելու համար,

(ը) ներառի բարձրագույն կրթության շրջանակներն ու մակարդակները,

(թ) աջակցի ոլորտի ներգրավմանը:

Կան նաև կառուցվածքներ, որոնք չի կարելի անտեսել եվրոպական հղման մակարդակները սահմանելիս.

(ա) գոյություն ունի ISCED-ի (Կրթության միջազգային ստանդարտների դասակարգում) հետ համընդհանուր շրջանակ, որ արդեն ստեղծել է նախնական կրթական համակարգերը համարժեք դարձնելու մակարդակների համակարգ,

(բ) գոյություն ունի բարձրագույն կրթության համակարգում շնորհվող որակավորումների ընդունված կառուցվածք,

(գ) NACE (ISIC)-ը (տնտեսական գործունեության ազգային դասակարգում) դարձել է սեկտորի սահմանման հիմք,

(դ) նորաստեղծ ԵՄ մակարդակների համակարգը՝ ճանաչելու կարգավորվող մասնագիտական որակավորումները:

Ցանկացած համակարգի պետք է թույլատրել համաձայնեցնելու ՄԿՈՒ մուտքային մոդելներն ու գնահատված արդյունքների վրա հիմնված մոդելները: Անհրաժեշտ է նաև, որ այն լինի ճկուն՝ թույլ տալով եվրոպական կրեդիտային համակարգի զարգացում:

5.3.1. Եվրոպական հղման մակարդակների գործնական նախագծմանն ուղղված քայլեր

Comment [S2]: հենքային

Գրեթե կասկած չկա, որ Եվրոպական շրջանակը պետք է յուրացնի ոչ թե համարժեք դարձնող շրջանակի բնույթը, այլ՝ բնութագրիչների հիման վրա գործող շրջանակինը: Այս որոշման պատճառները պարզորոշ են. եվրոպական հղման մակարդակները պետք է միշտ ընկալվեն որպես ներառական/համընդհանուր բոլոր սպառողների համար և պետք է հնարավորություն ստեղծեն ամենալայնածավալ կրթության համար, որպեսզի կարողանան ճանաչում ձեռք բերել: Սա չի նշանակում, որ չպետք է լինի որևէ որոշիչ ազդեցություն զուգահեռներ անցկացնելու համար, ինչպես դա կարող է պահանջվել համարժեք դարձնող շրջանակի սկզբունքներով: Այս զեկույցի հիմնական տեսակետը, որը հիմնվում է ՓՎԳ-ների մեր ուսումնասիրության վրա, այն է, որ մակարդակների համապատասխան ոակավորումների բաշխումը պետք է թողնել ազգային կառավարություններին: Մենք այս հարցին հետո նորից կանդրադառնանք:

Որոշելով, որ բնութագրիչներն անհրաժեշտ են, հաջորդ քայլն է որոշել, թե ինչքանով է պետք ծավալվել այս բնութագրիչների շուրջ: Մասնագիտական գրականությունը մեզ հուշում է, որ մշտապես կարիք կա մանրամասնել բնութագրիչները և թույլատրել մակարդակների ներսում ստեղծելու ենթաբաժիններ, որպեսզի հնարավոր լինի տեղավորել և կանոնավոր կերպով վերանայել որակավորումների շարքը: Մեկնաբանները անընդհատ մատնանաշում են կոնկրետ բնութագրիչների սահմանափակումները: Թվում է, թե բնութագրիչները և՛ «ակնհայտորեն անհրաժեշտ են» և՛ միաժամանակ խոցելի այն լավ հիմնավորված քննադատության հանդեպ, որը մատնանշում է ժամանակի ընթացքում գրանցված սահմանափակումները և խնդրահարույց տեսական ենթադրությունները (երբ մեկ պարագրաֆանոց բնութագրիչները թեթև լեզվաբանական կամ տերմինաբանական վարիացիաների շնորհիվ ստեղծում են նոր բնութագրիչներ տարբեր մակարդակներում):

Բնութագրիչների վրա հիմնված շրջանակների սահմանափակումների մասին հոգալու մի պարզ ձևն այն է, որ կարելի է ուղղակի ստեղծել բնութագրիչների մի հուսալի խումբ և ուշադրություն չդարձնել մնացած քննադատություններին՝ հիմնավորելով շրջանակի ցանկացած ձեռքբերում այն արդյունքների վերաբերյալ, որ շրջանակը հասնում է ՓՎԳ-ների, ընտրության և մատչելիության, որակավորումների ձևավորման և առաջարկի առումով: ISCED 97-ը և եվրոպական հինգ մակարդակների շրջանակը ընդունել են այս դիրքորոշումը, չնայած, որ առաջինը մասնակի փոխակերպման է ենթարկվել՝ ներառելով ենթամակարդակների որոշակի տեսակներ Ա, Բ, և Գ հատկորոշումներով: (տես Հավելված 1):

Համարժեք և բնութագրիչների հիման վրա ստեղծված շրջանակների համապատասխան օգուտները միավորելու և փոխարենը մի ուժեղ «մետաշրջանակ» ստեղծելու ձևերից մեկն այն է, որ պետք է մշակել մի շրջանակ, որը պարունակում է պահանջարկի և առաջադիմության մեծ թվով պարզորոշ չափումների շրջանակ: Ցանկացած որակավորում պետք է ընդունվի՝ որպես հիմք ընդունելով բնութագրիչների ամբողջական խմբի հետ «լավագույն համապատասխանության» սկզբունքը, այլ ոչ թե, որովհետև այն համապատասխանում է բնութագրիչների բոլոր պահանջներին: Մակարդակի մեջ կարող են լինել ոլորտներ, որին մի որակավորումը կարող է համապատասխանել, մյուսը՝ ոչ, չնայած որ չորս կամ հինգ կետով համընկնում են: Սա արդեն համապատասխանում է զգայունակության չափանիշին՝ (թույլ տալով փոփոխություններ/վարիացիաներ որակավորումների մեջ, որպեսզի այն համաձայնեցվի) միաժամանակ համապատասխանելով հարաբերություններ ցույց տալու չափանիշներին

(հարաբերությունների նկարագրական ուժ) և ցույց տալու, թե ինչպես է պետք մշակել որակավորումը, որպեսզի այն առավելագույնս համընկնի (փոփոխության և հետևողականության աջակցություն): Նմանատիպ շրջանակը թույլ է տալիս ունենալ ազատ «բջիջներ» շրջանակում: Այն նաև թույլատրում է մի կարևոր զարգացում՝ որակավորումների (մեծ միավորներ) և մոդուլների/կրեդիտների (փոքր միավորներ) շուրջ ուշադրության կենտրոնացման կարգավորում: Սա թույլ է տալիս մարդուն, որն ունի որակավորում, որ համապատասխանում է տվյալ մակարդակի հինգ էլեմենտներին, կենտրոնանալու կոնկրետ էլեմենտների վրա, օրինակ ուսուցողական մոդուլի միջոցով, որպեսզի նա կարողանա տիրապետել նաև այլ էլեմենտներին և համապատասխանի շրջանակի բոլոր վեց էլեմենտներին տվյալ մակարդակում (տես վերևում):

Մենք խիստ խորհուրդ ենք տալիս այս մոտեցումը վերոնշյալ պատճառներից ելնելով և որովհետև հավատում ենք, որ ուժեղ ՓՎԳ կարող է ստեղծվել այն շրջանակի շուրջը, որը արտաքնապես պարզ է, բայց կարողանում է ապահովել համապատասխանություն բավականին կատարելագործված մակարդակով:

5.3.2. Առաջարկվող նախագիծ. մատրիցայի մոտեցում

Թվում է, թե պարզ է, որ ցանկացած եվրոպական մոդելի մշակումը պետք է լինի բավարար ճկուն՝ ներառելու ազգային, տարածաշրջանային և ոլորտային զանազանությունները/վարիացիաները: Եվրոպական որակավորումների շրջանակը պետք է գա համաձայնության առ այն, որ պետք է ունենալ համընդհանուր կառուցվածք կամ ճարտարապետություն, որում բոլոր տարբեր ընթացիկ և ապագա որակավորումները կարող են տեղավորվել: Այն չպետք է և կարիք էլ չունի ենթադրելու, որ պետք է ստեղծել նույնատիպ որակավորումներ հատուկ չափորոշիչների, մատուցման, մոտեցման բովանդակության առումով, չնայած, որ համընդհանուր բնութագրիչների մշակումը կամ «ընդհանուր» որակավորումների նույնատիպ ընկալումը, ինչպիսին է օրինակ բարձրագույն կրթության առաջին աստիճանը, առավելություն է համարվում ճանաչելիության և համեմատելիության առումով: Փոխարենը, այն կստեղծի մի համատեքստ, որում կարելի է տեղավորել որակավորումների լայն բազմազանություն: Դա կնշանակի մի եվրոպական շրջանակի ստեղծում, որում տեղ կգտնեն ազգային որակավորումների շրջանակները՝ իրենց հերթին արտացոլելով ազգային տարբեր առաջնահերթություններ, մշակույթներ և հնարավոր է ավելի շատ մանրամասներ:

Հղման մակարդակի համակարգի իմաստն այն է, որ այն հնարավոր դարձնի ՄԿՈՒ համակարգի ոլորտների միջև հարաբերությունի գնահատումը/չափումը: Մինչև չմշակվեն ՄԿՈՒ կրեդիտները, մենք հավանաբար օգտագործելու ենք մակարդակների լեզուն: Մեր մարտահրավերը հետևյալն է. մենք պետք է կարողանանք նկարագրել մակարդակներն այնպես, որ յուրաքանչյուր պոտենցիալ սպառող զգա, որ հասկանում է այդ մակարդակի շրջանակն ու սահմանափակումները, և երբ նա կիրառի այդ հասկացածը կոնկրետ ուսուցման պրոցեսում, վստահ լինի, որ այն կամ համապատասխանում է, կամ չի համապատասխանում տվյալ մակարդակին:

Մի գաղափար, որ տեղ է գտել մի քանի զեկույցներում, գրառումներում կամ ներկայացվող նյութերում այն է, որ պետք է մակարդակը նկարագրել մի քանի որակական չափումների առումով: Այսպիսով, մենք ունենք երկակի չափման համակարգ՝ մակարդակի կամ պահանջարկի ուղղահայաց չափում և հորիզոնական չափում, որը պարունակում է գիտելիքի, հմտությունների և կարողությունների

վերաբերյալ բազմազան բնութագրիչ դասակարգումներ: Այս հորիզոնական չափումը կօգնի ճանաչելու ՄԿՈՒ հիմնական ոլորտները: Այս համակարգի շրջանակը կազմում է ՓՎԳ, քանզի համակարգի յուրաքանչյուր բջիջ իրենից ներկայացնում է վստահության և արժեքի ոլորտ: Մենք առաջարկում ենք մշակել բնութագրիչների վրա հիմնված շրջանակ կից ձեռնարկով, որը կներկայացնի որակական չափումները: Օգտագործողները կարող են նայել բնութագրիչին, որպեսզի ընդհանուր պատկերացում կազմեն մակարդակի մասին և հետո կարող են օգտագործել ձեռնարկը՝ հասկանալու որակավորումների և վերապատրաստման ծրագրերի կառուցվածքի և նկարագրի տարբեր ձևերը: Մենք հիմա կանդրադառնանք մատրիցայի մանրամասնած ասպեկտներին, որոնք ներառում են բնութագրիչներ և հորիզոնական որակական չափումներ:

5.3.3. Ուղղահայաց չափում

Որակավորումների եվրոպական շրջանակի մակարդակները պետք է տեղ տան որքան հնարավոր է շատ ազգային և ոլորտային շրջանակներում ընդգրկված մակարդակների: Եվրոպական շրջանակի մի քանի մակարդակներ որոշելու պարզ լուծումն այն է, որ պետք է ուսումնասիրել գործող ազգային և ոլորտային շրջանակները և ընտրել այն շրջանակը, որն ունի ամենամեծ թվով մակարդակները: Մենք կարող ենք օգտագործել Շոտլանդական փորձն ու գնահատման ծրագրերը, օրինակ Cedefop-ի (ՄԿՈՒ զարգացման եվրոպական կենտրոն) կատարած, 1985-ից սկսած ուսուցման/վերապատրաստման մակարդակների մասին վերլուծությունը, որը խրախուսում է շատ թվով մակարդակների գործածումը: Այս օրինակները նշում են, որ շատ թվով մակարդակների գործածումը ունի մի շարք առավելություններ (օգնում են հարմարեցնելու և խմբավորելու բարդ հարաբերությունները) և թույլ է տալիս հավատալու, որ որոշ մակարդակներ կարող են լինել դատարկ/չզբաղված:

Եվրոպական շրջանակի նախագծման մեջ մեկ այլ հարց էլ պարզունակության անհրաժեշտությունն է, որն առաջարկում է մակարդակների սակավաթվություն: Շահառուներին անհրաժեշտ է ունենալ «Եվրոպական մակարդակի» հայեցակարգ, որը հեշտորեն կարելի է համարժեք համարել տեղական համակարգին, որը իրենք լավ գիտեն: Այլ կերպ ասած եվրոպական մակարդակը պետք է լինի կրթության իրականացման գաղափար ՄԿՈՒ և ամբողջ կյանքի ընթացքում կրթության ոլորտներում, որը կոնկրետ տեղական մակարդակ կարողանա առաջարկել շահառուներին: Քանի որ մակարդակների թիվն աճում է, յուրահատուկ մակարդակների այս հայեցակարգային մոտեցումն ավելի դժվար է պահպանել և փոխարենը ամբողջ շրջանակն է դառնում ՄԿՈՒ մասին մտածելու հիմնական ձև: Այնուամենայնիվ, կա վկայություն, որ շահառուները սովորաբար անհանգստանում են շրջանակի մեկ կոնկրետ հատվածի մասին (օր. մակարդակների կամ բջիջների ավելի նեղ շարք, որում տեղավորվում է որակավորումների որոշակի խումբ) և չեն մտածում ամբողջական շրջանակի մասին: Շահառուների համար իդեալական տարբերակն այն է, որ նրանք կարողանան վստահությամբ և հստակորեն պատկերացնել մի մակարդակը և նաև կարողանան հասկանալ շրջանակի բոլոր մակարդակների նշանակությունը: Սակավաթիվ առանձին մակարդակների անհրաժեշտությունն և մեծ թվով մակարդակների օգտակարությունն ընդունելու մի ճանապարհ է ենթամակարդակների կամավոր սկբունքով գործածումը: Ենթամակարդակների համակարգերի օրինակներ տրված են 6-րդ և 8-րդ հավելվածներում:

Ենթամակարդակները կարող են լինել երկու հիմնական ձևերի: Առաջինը, նրանք կարող են խորհրդանշել մակարդակի ներսում իրականացման առաջադիմություն և հիմնականում հիերարխիական են (օր., նորելուկ, բանիմաց, փորձագետ): Այլ կերպ ասած, դրանք կարող են լինել կարգային ենթամակարդակներ, որոնք ցույց են տալիս որակավորման տարբեր բնույթները, որ կարող են լինել հիմնական մակարդակի մի մաս (օր., հանրակրթության որակավորում, ՄԿՈՒ որակավորում, աշխատանքային փորձ): Այս երկու տարբերակն էլ գրավիչ են եվրոպական հղման մակարդակների համար. առաջադիմական մոդելն առաջարկում է տարբեր ազգային կառուցվածքների համաձայնեցման հեռանկար, մինչդեռ կարգային մոդելը ամբողջ հղման մակարդակի մոդելը պահում է պարզ՝ համաձայնեցնելով ՄԿՈՒ-կատարման/ձեռքբերումների տարբեր տեսակները: Հավասարակշռելով՝ առաջադիմական մոդելն առաջարկում է ավելին, քանզի ՄԿՈՒ-ի իրականացման տարբեր կարգային հնարավորությունները կարող են տեղավորվել շրջանակի հորիզոնական բաղադրիչի մեջ (տես ստորև):

Մենք առաջարկում ենք, որ յուրաքանչյուր հիմնական մակարդակի համար օգտագործվեն երեք ենթամակարդակներ: Նրանք մոտավորապես այսպես կարող են սահմանվել.

(ա) մասնակի՝ նշելով, որ որակավորումը, ավարտած ուսուցումը/վերապատրաստումը կամ աշխատանքային փորձը, որ հիմնականում համընկնում են տվյալ բնութագրիչի հետ, ունեն նշանակալի բացեր, որոնք պետք է հաշվի առնել:

(բ) մոդալ՝ նշելով, որ որակավորումը, ավարտած ուսուցումը/վերապատրաստումը կամ աշխատանքային փորձը համընկնում է տվյալ բնութագրիչների հետ:

(գ) գերազանցող՝ նշելվ, որ որակավորումը, ավարտած ուսուցումը/վերապատրաստումը կամ աշխատանքային փորձը լիովին համապատասխանում է տվյալ մակարդակի առանձնահատուկ բնութագրիչների պահանջներին և կան որոշ լրացուցիչ էլեմենտներ, որոնք գերազանցում են տվյալ մակարդակի բնութագրիչների պահանջները:

Այս ենթամակարդակային տերմինները իրենցից ներկայացնում են ամբողջական կամ «ծագումնային» մակարդակի ենթաբաժանումներ: Որակավորումը պետք է համապատասխանեցվի ծագումնային մակարդակին, որն առաջարկում է «լավագույն համապատասխանեցում». համապատասխանեցումը կարող է անթերի չլինել: Ենթամակարդակները հնարավորություն են ընձեռում համապատասխանեցումն ավելի լավ իրականացնելու՝ որակավորումը դարձնելով «մասնակի», եթե այն ամբողջովին չի համապատասխանում մակարդակի պահանջներին և «գերազանցող», եթե այն ավելի լավն է, քան ծագումնային բնութագրիչը, սակայն ոչ այնքան լավ, որ համապատասխանում է շրջանակի հաջորդ մակարդակին:

Առանձին համարակալված տվյալի լեզուն միջազգայնորեն ընդունված է: Շատ շրջանակներ ունեն համարակալված չափումներ/մեծություններ, որտեղ յուրաքանչյուր մակարդակ նկարագրված է որպես իր հարևան մակարդակներից առանձին տարր: Մենք առաջարկում ենք, որ ՏԱԽ-ը շարունակի գործածել համարակալված մակարդակները: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր մակարդակի համար որակական բնութագրիչի գործածումը ևս ունի իր առավելությունները: Առաջին հերթին՝ տարբեր երկրներն ու ոլորտները կարող են գործող կառուցվածքներից անուններ փոխառնել՝ ցույց տալու ազգային շրջանակի և եվրոպական հղման մակարդակների միջև կապը. մակարդակների անվանակոչումը պետք է թողնել սպառողների հայեցողությանը, քանի որ մակարդակների համար

միասնական եվրոպական անվանակարգ ունենալու և դա տարբեր լեզուներով թարգմանելու առավելությունն այս պահին չկա: Երկրորդ հերթին՝ անունների գործածումը կարող է հնարավորություններ ստեղծել առաջադիմության և մեկ հիմնական մակարդակից մյուսին շարունակական անցման համար՝ այսպիսով աջակցելով նաև ամբողջ կյանքի ընթացքում կրթության նապատակին: Եվրոպական լեզվական շրջանակում մակարդակները սահմանված են այնպիսի բառերով, որոնք տալիս են մակարդակի բնույթի ընդհանուր նկարագրություն: Մակարդակների անվանակոչումը կարող է ունենալ նաև երրորդ առավելությունը. մակարդակների անունները կարող են դիտմամբ ստեղծվել այնպես, որպեսզի չհամընկնեն ազգային շրջանակում արդեն գոյություն ունեցող տերմինների հետ, եթե բարեփոխման քաղաքականության կամ փոփոխության ցանկություն կա: Պետք է նաև նշել, որ մակարդակների անունները կարող են նաև երկրների և ոլորտների համար հնարավորություն ստեղծել միավորելու մակարդակների անունները (և եթե կիրառելի է՝ ենթամակարդակներինը) մեկ համաձայնեցված տարբերակով: Որոշ երկրներում գոյություն ունի տարբեր մակարդակների և ենթամակարդակների տերմինների բազմազանություն:

Այդուհանդերձ հղման մակարդակների համար առաջարկվում են հետևյալ ուղղահայաց բաղադրիչները.

Աղյուսակ 4. Հղման մակարդակների ուղղահայաց մոդել

Եվրոպական հղման մակարդակներ	**Անունը (որոշված ազգայնորեն, առաջարկված նշագրում, որ կարող է հարմար լինել Միացյալ Թագավորությունում)**	**Ենթամակարդակ, եթե կիրառելի է (որոշված ազգայնորեն, առաջարկված նշագրում Միացյալ Թագավորությ ան համար)**
1	Ընդհանուր	
2	Մուտքային	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է
3	Հիմնական	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է
4	Տեխնիկ	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է
5	Փորձագետ տեխնիկ	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է
6	Փորձագետ	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է
7	Վարպետ	Մասնակի
		Մոդալ
		Գերազանցում է

8	Մասնագետ	Մասնակի
		Մոդալ

5.3.4. Մակարդակների առանձնահատկությունների սահմանում

Այս ոլորտում կատարված է զգալի չափով հետազոտական աշխատանք: Առաջարկվում է գործածել լայն չափանիշներ մի մակարդակի (ենթամակարդակի) բնութագրիչները մյուսներից տարբերակելու համար: Բնութագրիչները պետք է.

(ա) հստակորեն առնչվեն վերոնշյալ և ստորև նշված մակարդակների հետ, որտեղ հնարավոր է, միայն առաջադիմության առումով: Բոլոր մյուս դեպքերում յուրաքանչյուր մակարդակի բնութագրիչ պետք է լինի անկախ,

(բ) սահմանված լինեն դրական տերմիններով և խուսափեն տվյալ մակարդակի որակավորումների համար անընդունելի բոլոր տեսակի ձևակերպումներից,

(գ) լինեն կոնկրետ և որոշակի և խուսափեն այնպիսի բառերի գործածումից ինչպիսին են «նեղ» և «լավ», կամ էլ այնպիսի համեմատությունների, ինչպիսին են «ավելի նեղ», «ավելի լայն» կամ «համապատասխան»,

(դ) լինեն առանց ժարգոնների և դյուրընկալ ոչ փորձագետի մակարդակի ընթերցողի համար,

(ե) լինեն հնարավորինս հակիրճ՝ ապահովելու տվյալ մակարդակի հայեցակարգի հստակությունը:

Պահանջվում է հետագա աշխատանքներ տանել՝ ստեղծելու բնութագրիչների լայնորեն ընդունելի և ուժեղ համակարգ ուսուցման և վերապատրաստման եվրոպական մակարդակների համար: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող շրջանակների վերլուծությունը ցույց է տվել, որ ընդհանուր մակարդակի բնութագրիչների և առանձնահատուկ մակարդակի բնութագրիչների տարբերակումն օգտակար կլինի: Ընդհանուր մակարդակի բնութագրիչները լայնիմաստ ձևակերպումներ են և նպատակ ունեն արտահայտելու մակարդակի հասկացությունը: Նրանք ուղեկցվում են համարով (և հնարավոր է անվամբ) և հղում չեն կատարում որևէ առկա որակավորման կամ ՄԿՈՒ-ի որևէ առանձնահատուկ փաչորոշչի վրա: Առանձնահատուկ բնութագրիչները միավորում են հորիզոնական և ուղղահայաց բաղադրիչները՝ ներկայացնելով որակավորման պահանջների ավելի մանրամասն նկարագրություն՝ համապատասխանելու մակարդակի (կամ ենթամակարդակի) հետ: Հորիզոնական չափումը քննարկելիս մենք դեռ կվերադառնանք առանձնահատուկ բնութագրիչների հարցին: Բնութագրիչներում պարունակվող առանձնահատկության մակարդակը կարևոր հարց է: Եթե առանձնահատկությունը մանրամասն է և խիստ յուրովի, ապա բնութագրիչները դառնում են սպառնալից սպառողների համար և նրանք աշխատում են այնպես գործել, որ բացառեն համապատասխանեցումը և հնարավոր է նաև նվազեցնեն հնարավորությունները լայն ՓՎԳ-ի զարգացման համար: Երբ ավելի լայն իմաստով են ձևակերպված, դրանք ընկալվում են որպես ներառական՝ դրանով իսկ թույլ տալով գործող կառուցվածքների համաձայնեցում և հետևաբար ավելացնելով ՓՎԳ-ի զարգացման հնարավորությունները:

Եվրոպական մակարդակները պետք է լինեն ներառական և լայնածավալ. ՓՎԳ-ների զարգացումը հիմնանպատակն է, ուստի ընդհանուր բնութագրիչները պետք է ձևակերպվեն այնպես, որ բաց լինեն ազգային համակարգերը համաձայնեցնելու հարցում:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է մի շրջանակ մի խումբ ընդհանուր բնութագրիչների հետ: Դա պատրաստված է վերոնշյալ վկայության հիման վրա: ՏԱԽ-ը կարող է բնութագրիչների հավանական արդյունավետությունը համարել հիմնաքար ներառական եվրոպական կրեդիտային շրջանակի համար, որը վերաբերվում է ՄԿՈՒ և բարձրագույն կրթության համակարգերին՝ տարբերակելով որակավորումները որպես սովորողների շարժունակության համար հիմնական ացումային դրույթներ և ըստ ազգային համակարգերում առկա տարբերակումների:

Աղյուսակ 5. Եվրոպական հղման մակարդակների ընդհանուր բնութագրիչների նախագիծ

Եվրոպական հղման մակարդակներ	Ընդհանուր բնութագրիչի նախագիծ
1	Կրթությունը հիմնականում ձեռք է բերվում պարտադիր կրթության ընթացքում և համարվում է նպաստող ընդհանուր գիտելիքին և հիմնական հմտությունների ձևավորմանը: Կրթությունը հաճախ համատեքստային չի աշխատանքային իրավիճակներում:
2	Պարտադիր կրթության ավարտում, որը ներառում է աշխատանքի ներկայացում/ներածական: Աշխատանքին վերաբերվող հիմնական/տարրական գիտելիքը կարող է ձեռք բերվել կրթական հաստատությունում, արտադպրոցական ուսումնական ծրագրով կամ ձեռնարկությունում: Հիմնականում այն զբաղմունքին հատուկ չէ: Գիտելիքի, հմտությունների ու կարողությունների շրջանակը սահմանափակ է: Այս մակարդակի որակավորումը ցույց է տալիս, որ մարդն ի վիճակի է կատարելու պարզ գործեր և կիրառել իր հմտությունները վերահսկվող միջավայրում: Բոլոր գործողություններն առաջնորդվում են թույլատրելի ուղիներն ու ռազմավարությունը սահմանող կանոններով:
3	Հիմնական մասնագիտական ուսուցման ավարտում, աշխատանքային կարողության գաղափարի ծանոթացում: Դա հիմնականում համարվում է ավագ միջնակարգ կրթության մի մաս: Այս որակավորումը ցույց է տալիս, որ մարդն ունի տարբեր աշխատանքային ֆունկցիաների հարմար հիմնական հմտություններ և կարողություն՝ կատարելու աշխատանքներ ուղղորդմամբ: Այս մակարդակի որակավորում ունեցող մարդկանց հիմնական գործողությունը գիտելիքի և հմտությունների դիտավորյալ կրկնողությամբ կիրառումն է:
4	Այս մակարդակի որակավորումը հիմնականում ներառում է ավագ միջնակարգ կրթության և աշխատանքի վրա հիմնված ուսուցման ծրագիրը այլընտրանքային կամ արհեստագործական սխեմայով և ներառում է կոնկրետ զբաղմունքի ոլորտին առնչվող գիտելիքի զարգացումը: Այս մակարդակում որակավորված մարդիկ կարող են ինքնուրույն աշխատել հանձնարարությունների վրա և կարողություն ունեն կիրառելու մասնագիտական գիտելիքը, հմտություններն ու կարողությունները: Նրանք կունենան մեծ փորձ ընդհանուր և բացառիկ իրավիճակներում և ի վիճակի կլինեն խնդիրները լուծել ինքնուրույն՝ օգտագործելով այդ փորձը:

5	Հիմնական մասնագիտական ուսուցման որակավորման ավարտում, ինչպիսին է արհեստագործությունը կամ հետագա կրթությունն ու ուսուցումը: Այս տեսակի որակավորումը ներառում է նշանակալի տեսական գիտելիքներ և ներառում է հիմնականում տեխնիկական աշխատանք, որը կարող է իրականացվել ինքուրույն և ենթադրում է վերահսկողական կամ համակարգող պարտավորություններ: Այս մակարդակի որակավորումը ցույց է տալիս, որ մարդը կարող է գործ ունենալ բարդ իրավիճակների հետ և նրանց աշխատանքը կարող է հենանիշ լինել մյուսների համար: Նրանք կունենան բավականին փորձ և պրակտիկա տարբեր աշխատանքային իրավիճակներում: Այս հղման մակարդակը հաճախ կապում է միջնակարգ և բարձրագույն կրթությունն ու ուսուցումը:
6	Այս մակարդակի որակավորումը ընդգրկում է բարձր մակարդակի տեսական և գործնական գիտելիք, հմտություններ և կարողություններ՝ ենթադրելով զբաղմունքի գիտական հիմքերի իմացություն: Դա նշանակում է, որ մարդը հանգիստ կարող է գործ ունենալ բարդ իրավիճակների հետ, ընդհանուր առմամբ ինքուրույն է և կարող է ենթադրել նախագծման, կառավարման կամ վարչական պարտավորություններ: Նման որակավորումը համարժեք է բարձրագույն կրթության Բոլոնյան առաջին ցիկլին:
7	Այս որակավորումները ճանաչում են մասնագետի տեսական և գործնական գիտելիքները/կրթությունը, որը պահանջվում է աշխատելու որպես (ավագ) մասնագետներ կամ ղեկավարներ: Այս մակարդակում որակավորված մարդիկ կունենան խորը ընկալում և գիտելիք ի վիճակի կլինեն ցուցադրելու ոլորտի մասնագիտական կարողությունների բարձր մակարդակ: Նրանք կգործեն ինքուրույն և կվերահսկեն ու կուսուցանեն մյուսների որտեղ հնարավոր է: Այս որակավորումը համարժեք է բարձրագույն կրթության Բոլոնյան երկրորդ ցիկլին:
8	Այս որակավորումները մարդուն ճանաչում են որպես առաջատար փորձագետ խիստ մասնագիտացված ոլորտում, ով գործ ունի բարդ իրավիճակների հետ և կարող է երկարատև ռազմավարական և գիտական գաղափարներ առաջարկել ու իրականացնել: Այսպիսի փորձագետները մշակում են նոր և ստեղծագործական մոտեցումներ, որոնք ընդարձակում կամ վերաձևակերպում են գոյություն ունեցող գիտելիքը կամ մասնագիտական փորձը և հաճախ սովորեցնում են ուրիշներին՝ դառնալու փորձագետներ և վարպետներ: Որակավորումները համարժեք են բարձրագույն կրթության Բոլոնյան երրորդ ցիկլին:

Այս ութ մակարդակների սահմանմամբ հնարավոր է դառնում յուրաքանչյուր հիմնական որակավորման համար գտնել համապատասխան մակարդակ յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր ոլորտում: Պետք է որ նաև հնարավոր լինի նախանշել մակարդակ լավ մեկնաբանված աշխատանքային փորձի ժամանակահատվածի համար: Կարևոր է նաև սահմանել առաջարկվող մատրիցայի հորիզոնական բաղադրիչը, որպեսզի ՄԿՈՒ իրականացումը կարելի լինի տեղակայել ինչ-որ մակարդակի կամ, եթե կիրառելի է, ենթամակարդակի վրա:

5.3.5. Հորիզոնական չափում

Հորիզոնական կամ որակական չափումը արագ արձագանքման հիմնական ոլորտն է, որ մակարդակները կհամալրի առանձնահատկություններով: Այն պետք է ներառի որակական բնութագրիչները, որոնք թույլ կտան մարդուն շրջանակն օգտագործելով գտնել, թե որտեղ է ցանկացած

տիպի ճանաչված ՄԿՈՒ որակավորում տեղակայված: Այն կուղղորդի մատչելիությունը, ճկունությունը, հենանիշների հասկացությունը և որակի ապահովումը: Հորիզոնական չափման հետագա սահմանումը կարևոր գործ է ՏԱԽ-ի համար:

Կարևոր է կանխատեսել, թե որակավորումների շրջանակի սպառողները ինչ տիպի որակավորման համար են ուզում մակարդակ գտնել: Առաջարկվում է, որ առաջին փուլի համար միայն երկու որակական տարբեր չափումներ գործածվեն.

(i) լիարժեք որակավորում, մասնակի որակավորում և գնահատման միավորներ: Սա ներառում է ուսուցման ծրագրի կամ դրա մի զգալի մասի հաջող ավարտում,

(ii) այնպիսի զբաղմունքի աշխատանքային փորձ, որը բավարարում է պարտադիր նվազագույն ժամանակի սահմանված պահանջը:

Այս երկու չափումները կարող են ընդարձակվել կամ ենթաբաժանվել հղման մակարդակի մշակման հետագա փուլերում: Երեք չափանիշ պետք է մշակվի՝ սպառողներին ցույց տալու որակավորման բնույթը, որն ակնկալվում է համապատասխանեցնել հղման մակարդակների հետ: Սրանք լայն առումով սահմանվում են հետևյալ կերպ.

- այն նկարագրվում է ուսուցման արդյունքների առումով,
- այն կարող է գնահատվել,
- նրա որակն ապահովված է:

Նախատեսվում է, որ այս չափումները կլինեն ազգային համակարգին կապված. յուրաքանչյուր չափման ներսում մենք պետք է ակնկալենք էլեմենտներ, որոնք կապված են այդ ազգային համակարգերի բլոկների ձևավորման հետ: Օրինակ, վերապատրաստման ծրագրի համար մենք կարող ենք ակնկալել մի հատկորոշում, որը ներառում է մանրամասներ գիտելիքի և ընկալման, հմտությունների կիրարկման և կարողությունների ձեռքբերման վերաբերյալ: Փորձի չափման մեջ կարող ենք ակնկալել հասկանալու աշխատանքի նկարագիրը, անկախության աստիճանի մանրամասները և մյուսների աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը:

Գիտելիքի, հմտությունների և կարողությունների նմանատիպ մանրամասն հատկորոշումները ուսումնասիրվել են որպես այս նախագծի մի մաս և առաջիկա Cedefop (ՄԿՈՒ զարգացման եվրոպական կենտրոն) ուսումնասիրության պայմանագրի թեման են կազմում: Այս աշխատանքի հաջորդ էտապում յուրաքանչյուր չափում կարող է սահմանվել այսպիսի հատկորոշումների առումով:

Այժմ հնարավոր է ստեղծել մի մատրիցա երկու որակական չափումներով՝ որպես սյունակներ հղման մակարդակի շրջանակում: Հորիզոնական բաղադրիչի յուրաքանչյուր սյունակում հնարավոր կլինի ստեղծել առանձնահատուկ բնութագրիչ յուրաքանչյուր մակարդակի համար, որը կհամապատասխանի յուրաքանչյուր մակարդակի ընդհանուր բնութագրիչի հետ և կընդարձակի այն: Առաջարկվում է, որ հատուկ բնութագրիչները պետք է նվազագույնն ընդգրկեն հետևյալ չորս բաղադրիչները յուրաքանչյուր մակարդակում կամ ենթամակարդակում.

(ա) գիտելիքի, հմությունների և կարողությունների նկարագիր, որը սովորաբար ներառված է որակավորումների մեջ, օր. ուսուցման/վերապատրաստման ծրագրերի արդյունքներ և համապատասխան աշխատանքի ընդհանուր նկարագրեր,

(բ) որակավորումների և աշխատանքի նշանակալի համատեքստային հնարավորությունների մատնանշում, ինչպիսին են օրինակ՝ գործունեության ոլորտի բարդությունը, նախաձեռնողությունը/ստեղծագործականությունը/անհրաժեշտ խնդիրների լուծման կարողությունը, սովորելու ընթացքում ինքնուրույնության աստիճանը (ուսուցման պրոցեսի ղեկավարում, անկախություն), մյուսների հանդեպ ունեցած դերերը (այլ մարդկանց ղեկավարում և թիմային աշխատանքի հմտություններ),

(գ) որակավորմամբ, ուսուցմամբ կամ աշխատանքով ընդհանուր պահանջված կարողություններ,

(դ) որակի ապահովման գործընթացներ, որոնք սովորաբար առնչվում են որակավորման, ուսուցման կամ աշխատանքի ստուգման և գնահատման հետ:

Չորրորդ կետը տարբերվում է առաջին երեքից, որոնք կապված են որակավորման, ուսուցման կամ աշխատանքի արդյունքի հետ: Չորրորդ կետը ներառված է, որովհետև այն ահազանգում է, որ, որպեսզի որակավորումները համապատասխանեն, նրանք պետք է նաև անցնեն որակի ապահովման գործընթացներ: Առանց նմանատիպ նախազգուշացման դժվար կլինի կառուցել ՓՎԳ, որովհետև սպառողները կարող են զգալ, որ տարբեր երկրներում որակավորումների համարժեքության նպատակով հղման մակարդակների գործածումը խիստ ռիսկային կարող է լինել: Որակի ապահովման առանձնահատկությունը պետք է առանձին երկրների համար մանրամասները սահմանելու տեղ թողնի. հղման մակարդակի շրջանակի հետ կապված այն պետք է սահմանվի ավելի լայն մանրամասներով: Հաջորդ էջում տրված է հղման մակարդակի շրջանակի առաջարկվող մոդելը (Աղյուսակ 6).

Աղյուսակ 6. Առաջարկվող մակարդակների շրջանակի մոդել

Եվրոպական հղման մակարդակներ	Ընդհանուր բնութագրիչ	Ա չափում որակավորում	Բ չափում աշխատանքային փորձ
1	Կրթությունը հիմնականում ձեռք է բերվում պարտադիր կրթության ընթացքում և համարվում է նպաստող ընդհանուր գիտելիքին և հիմնական հմտությունների ձևավորմանը: Կրթությունը հաճախ համատեքստային չի աշխատանքային իրավիճակներում:		
2	Պարտադիր կրթության ավարտում, որը ներառում է աշխատանքի ներկայացում/ներածական: Աշխատանքին վերաբերվող հիմնական/տարրական գիտելիքը կարող է ձեռք բերվել կրթական հաստատությունում, արտադպրոցական ուսումնական ծրագրով կամ ձեռնարկությունում: Հիմնականում այն զբաղմունքին հատուկ չէ: Գիտելիքի, հմտությունների ու կարողությունների շրջանակը սահմանափակ է: Այս մակարդակի որակավորումը ցույց է տալիս, որ մարդն ի վիճակի է կատարելու պարզ գործեր և կիրառել իր հմտությունները վերահսկվող միջավայրում: Բոլոր գործողություններն առաջնորդվում են թույլատրելի ուղիներն ու ռազմավարությունը սահմանող կանոններով:		
3	Հիմնական մասնագիտական ուսուցման ավարտում, աշխատանքային կարողության գաղափարի ծանոթացում: Դա հիմնականում համարվում է		

	ավագ միջնակարգ կրթության մի մաս: Այս որակավորումը ցույց է տալիս, որ մարդն ունի տարբեր աշխատանքային ֆունկցիաների հարմար հիմնական հմտություններ և կարողություն՝ կատարելու աշխատանքներ ուղղորդմամբ: Այս մակարդակի որակավորում ունեցող մարդկանց հիմնական գործողությունը գիտելիքի և հմտությունների դիտավորյալ կրկնողությամբ կիրառումն է:		
4	Այս մակարդակի որակավորումը հիմնականում ներառում է ավագ միջնակարգ կրթության և աշխատանքի վրա հիմնված ուսուցման ծրագիրը այլընտրանքային կամ արհեստագործական սխեմայով և ներառում է կոնկրետ զբաղմունքի ոլորտին առնչվող գիտելիքի զարգացումը: Այս մակարդակում որակավորված մարդիկ կարող են ինքնուրույն աշխատել հանձնարարությունների վրա և կարողություն ունեն կիրառելու մասնագիտական գիտելիքը, հմտություններն ու կարողությունները: Նրանք կունենան մեծ փորձ ընդհանուր և բացառիկ իրավիճակներում և ի վիճակի կլինեն խնդիրները լուծել ինքնուրույն՝ օգտագործելով այդ փորձը:		
5	Հիմնական մասնագիտական ուսուցման որակավորման ավարտում, ինչպիսին է արհեստագործությունը կամ հետագա կրթությունն ու ուսուցումը: Այս տեսակի որակավորումը ներառում է նշանակալի տեսական գիտելիքներ և ներառում է հիմնականում տեխնիկական աշխատանք, որը կարող է իրականացվել ինքուրույն և ենթադրում է վերահսկողական կամ համակարգող պարտավորություններ: Այս մակարդակի որակավորումը ցույց է տալիս, որ մարդը կարող է գլուխ հանել բարդ իրավիճակներից և նրանց աշխատանքը կարող է հենանիշ լինել մյուսների համար: Նրանք կունենան բավականին փորձ և պրակտիկա տարբեր աշխատանքային իրավիճակներում:		
6	Այս մակարդակի որակավորումը ընդգրկում է բարձր մակարդակի տեսական և գործնական գիտելիք, հմտություններ և կարողություններ՝ ենթադրելով զբաղմունքի գիտական հիմքերի իմացություն: Դա նշանակում է, որ մարդը հանգիստ կարող է գործ ունենալ բարդ իրավիճակների հետ, ընդհանուր առմամբ ինքուրույն է և կարող է ենթադրել նախագծման, կառավարման կամ վարչական պարտավորություններ: Նման որակավորումը համարժեք է բարձրագույն կրթության Բոլոնյան առաջին ցիկլին:		
7	Այս որակավորումները ճանաչում են մասնագետի տեսական և գործնական գիտելիքները/կրթությունը, որը պահանջվում է աշխատելու որպես (ավագ) մասնագետներ կամ ղեկավարներ: Այս մակարդակում որակավորված մարդիկ կունենան խորը ընկալում և գիտելիք ի վիճակի կլինեն ցուցադրելու ոլորտի մասնագիտական կարողությունների բարձր մակարդակ: Նրանք կգործեն ինքուրույն և կվերահսկեն ու կուսուցանեն մյուսների որտեղ հնարավոր է: Այս որակավորումը համարժեք է բարձրագույն կրթության Բոլոնյան երկրորդ ցիկլին:		
8	Այս որակավորումները մարդուն ճանաչում են որպես առաջատար փորձագետ խիստ մասնագիտացված ոլորտում, ով գործ ունի բարդ իրավիճակների հետ և կարող է երկարատև ռազմավարական և գիտական մտքեր ծավալել ու իրականացնել:		

	Այսպիսի փորձագետները մշակում են նոր և ստեղծագործական մոտեցումներ, որոնք ընդարձակում կամ վերաձևակերպում են գոյություն ունեցող գիտելիքը կամ մասնագիտական փորձը և հաճախ սովորեցնում են ուրիշներին՝ դառնալու փորձագետներ և որակավորված մասնագետներ: Որակավորումները համարժեք են բարձրագույն կրթության Բոլոնյան երրորդ ցիկլին:		

6. Հղման մակարդակների իրագործում

6.1. Հղման մակարդակի շրջանակի մասին ուղեցույց

Նոր հղման մակարդակները պետք է լինեն նոր ՓՎԳ-ների կենտրոնում, որոնք վստահություն կներշնչեն տարբեր հետաքրքրություններ և հեռանկարներ ունեցող շահառուներին՝ համաձայնեցնելու տեղական որակավորումները այլ երկրների որակավորումների հետ: Նոր ՓՎԳ-ի հիմնման մի օգտակար գործիք կարող է լինել ուղեցույցը կամ ձեռնարկը, որը կօգնի եվրոպական հղման մակարդակները տեղական որակավորման կառուցվածքների թարգմանելու հարցում: ISCED 97 շրջանակը, ինչպես նաև եվրոպական լեզուների շրջանակը սպառողին տալիս են նման ուղեցույցեր: Բազմաթիվ ազգային շրջանակներ ևս ուղեկցվում են ուղեցուցային փաստաթղթերով: Նման ձեռնարկի թողարկումը կարող է դառնալ խորհրդատվության և զարգացման մի մաս, որը կարող է կառուցվել հետևյալ կերպ.

(ա) քայլ 1: եվրոպական հղման մակարդակներն առաջարկվում են,

(բ) քայլ 2: երկրներն ու մասնագիտական մարմիններն արձագանքում են առաջարկված մակարդակներին, նախագծում են ընդհանուր բնութագրիչները և նրանցից խնդրվում է կարծիք հայտնել, թե ինչպես են վերաբերվում իրենց մոտ առկա շրջանակներին,

(գ) քայլ 3: երկրներից ստացված կարծիքներն օգտագործվու են լրամշակելու մակարդակներն ու բնութագրիչները և ստեղծելու ուղեցույցի նախագիծ՝ որպես քննարկման փաստաթուղթ,

(դ) քայլ 4: համաձայնեցված եվրոպական հղման մակարդակներն ու բնութագրիչները գործի են դրվում,

(ե) քայլ 5: երկրներին ու մասնագիտական մարմիններին խնդրվում է մշակել մանրամասն ուղեցույց եվրոպական հղման մակարդակների և իրենց երկրներ շրջանակների համապատասխանելիության մասին,

(զ) քայլ 6: լույս է ընծայվում միջազգային ուղեցույցը, որը ներկայացնում է տարբեր ազգայի համակարգերում հղման մակարդակների և բնութագրիչների թարգմանությունը:

Այս գործընթացը պլանավորված է ցույց տալու, որ հղման մակարդակները կազմում են մի միջազգային հենակետային փաստաթուղթ, որը օգնում է սովորողների և ընդհանրապես մարդկանց շարժունակությանը Եվրոպայում: Մանրամասն վերարտադրությունն ու որակի ապահովումը ազգային մարմինների լուծելու հարցն է:

Իրականացման կարգը պետք է ներառի այնպիսի գործիքներ, որոնք կապված են երրորդ գլխում ներկայացված և ստորև վերարտադրված սխեմայի յուրաքանչյուր մասի հետ: Սա անհրաժեշտ է, եթե վստահությունը պետք է ձևավորվի այնպես, ինչպես նշում էին ՏԱԽ-ի քննարկումները:

Պատկեր 7. Փոխադարձ վստահության գոտիներ

գործիքներ/միջոցներ
օր. որակավորումների
շրջանակ
համատեքստային ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ իրականացման

պայմաններգործիքների/միջոցների օր. աշխատանքային շուկայի պայմաններ	**գործիքներ/միջոցներ**

համակարգում գոյություն ունեցող տարբեր կողմերի ընկալում

Քանի որ ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգը (ECVET) զարգանում է, ապա ուղեցույցը կարող է ընդլայնվել՝ բացատրելու այնպիսի բաներ, ինչպիսին են ECVET համակարգում գործածվող տերմինալոգիան, կրեդիտային արժեքները, միավորների համակցման կարգերն ու գնահատման չափանիշները:

Մի առանձնահատուկ հարց կա, որ խիստ կարևոր է Եվրոպայի համար ՄԿՈՒ-ի հղման մակարդակների տեսանկյունից: Դա ցանկացած հղման շրջանակ հետ գործ ունեցող մասնակիցների փոփոխական բնույթն է: Հասկանալի է, որ երկկողմ համաձայնության ամենահեշտն է գալ, որտեղ կա կամք ինչ-որ բան իրականացնելու համար (GRE/ITA որակավորումների ճանաչման համար, GER/AUS կարգերը շարժունակության և ուսուցման համար): ԵՄ15-ը գործունեության բացարձակ այլաբնույթ սանդղակ է, իսկ առավել ևս ԵՄ25-ը ՝ առաջարկելով երկկողմանի կարգավորումների 600 հնարավոր համակցումներ այս ԵՄ25 համակարգում: Այդ իսկ պատճառով դժվար է ՓՎԳ-ների կարգավորումն ու զարգացումը, բայց շատ կարևոր է, եթե ուզում ենք, որ գործի եվրոպական աշխատաշուկան: Ռազմավարական նշանակության հարցն այն է, թե ինչպես է ճիշտ սկսել՝ սկսե՞լ ավելի ընդհանուրից և ընտրության հնարավորություն տալ, թե՞ սկսել ավելի առանձնահատուկից/որոշակիից և իրականացնելով մի շարք երկկողմ կարգավորումներ, թույլ տալ ընդհանրացման (և վստահության) ձևավորում:

6.2. Որակի ապահովման խնդիրներ

Ուսումնասիրությունները կենտրոնացված չեն եղել որակի ապահովման խնդիրների (ՈԱ) վրա, չնայած մենք տեխնիկական աշխատանքային խմբի քննարկումներում և որոշումներում հղում կատարում ենք ՄԿՈՒ-ի որակի վրա, որը և ձևավորում է որակի ապահովման համակարգի սկզբունքները: ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգի (ECVET) մշակման հետագա փուլերում կպահանջվի արդյունքների ավելի խորն ուսումնասիրություն: Հսկայական տեխնիկական օգուտներ կլինեն, եթե հղման մակարդակներն ու նրանց հետևող ECVET –ի կրեդիտային շրջանակը զարգանան վստահության իրավիճակներից: Երբ ընդունվեն աղմկահարույց հղման մակարդակներն ու ECVET-ը, շրջանակի զարգացման նշաններից պարզ է դառնում, որ ուշադրությունը կկենտրոնանա որակի ապահովման խնդիրների վրա: Այս իսկ պատճառով մենք պնդեցինք, որ կոնկրետ մակարդակի (ենթամակարդակի) բնութագրիչներում հատուկ տեղ հատկացվի որակի ապահովման վերաբերյալ հղումներին (տե՛ս վերևում): Մենք կարծում ենք, որ որակի ապահովման գործը կապված ավելի կոնկրետ մակարդակների հետ ամենաճիշտն է թողնել ազգային և ոլորտային փորձագետներն: Այնուամենայնիվ, ՏԱԽ-ը, որակի գծով տեխնիկական աշխատանքային խումբը, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգում Բոլոնյային վերաբերվող աշխատանքը պետք է կարողանա ուղղորդում տալ որակի ապահովման վերաբերյալ, որը ակնկալվում է որակավորումը մշակողներից և գնահատողներից:

Գործող ՓՎԳ-ները և մակարդակների շրջանակները ուսումնասիրելով՝ կարող ենք առանձնացնել հետևյալ կետերը:

Մակարդակների շրջանակի զուտ գոյությունը բավարար չէ՝ նույնիսկ ճանաչված մակարդակների (ոլորտային/ազգային,միջազգային) շրջանակների և թվարկումների գոյության պարագայում, ուստի ինչ-որ մեկը կամ ինչ-որ մարմին դեռ պետք է որոշի, թե արդյո՞ք տվյալ որակավորումը կամ փարձը համապատասխանում է նշված պահանջներին (օրինակ շրջանակի ինչ-որ կոնկրետ մակարդակի): Շրջանակի մակարդակների համար որակավորումների, փորձի և այլնի սահմանումը անհրաժեշտ գործընթաց է. հարկավոր է ստեղծել վարչական ապարատի կոնկրետ մի ձև, որը կզբաղվի այս հարցով: Արդյո՞ք այն պետէ է լինի կոնկրետ ոլորտային: Արդյո՞ք ոլորտային երկկողմ համաձայնությունները բավարար են:

Այս գործընթացը կարող է պահանջել ազգային մեխանիզմներ և նրանց համագործակցությունը եվրոպական մակարդակի վրա, որպեսզի ձևավորվերն ավելի տևական ՓՎԳ-ներ և ավելի կայուն ձևով:

Պետք է ստեղծել չափանիշներ (տարբեր երկրներում պատասխանատու մարմինների փոխադարձ համաձայնությամբ, կամ կանոնակարգով) գնահատման ձևերի վերաբերյալ, որոնք պետք է լինեն և՛ խելամիտ/ընդունելի (համապատասխան հիմնավորմամաբ), և՛ պետք է արդյունավետորեն կիրառվեն (համապատասխան հուսալիությամբ) կոնկրետ արդյունքների հանդեպ:

Պետք է նաև որոշումներ կայացնել մակարդակների համար որակավորումներ սահմանելու վերաբերյալ հանրային հաշվետվողականության և կանոնակարգման թափանցիկության ձևերի (և մեխանիզմների) մասին: Ֆորմալ համակարգման պայմաններում, սրանք կկապվեն գործունեության լիցենզավորման հետ(օրենսդրությամբ ամրագրված), դրանք կարող են պարտադրվել նաև խիստ ոչ ֆորմալ ՓՎԳ-ների վրա, որոնք գոյացել են կարճաժամկետ աշխատանքային պահանջների միջոցով (հմտությունների պակաս/բացեր):

6.3. Առկա ՓՎԳ-ների հետ կապված խնդիրներ

ՄԿՈՒ-ի և որակավորման համար ՓՎԳ-ի ստեղծումը կպահանջի ուսուցման և գիտելիքի ծավալի որաշակի սահմանում: Բարձրագույն կրթության ոլորտում աշխատանքի ծանրաբեռնվածության քանակական նկարագիրը հանդիսանում էր որպես հիմնական փոփոխական (variable), և դրա շուրջ համաձայնություն էր ձեռք բերվել, քանի որ քանակականացման միջոցը (բավականին չհղկված) սահմանվել և խթանվել էր: Մասնակցության մոտիվացիան գալիս է այս սահմանումից: Ավելի դժվար կլինի սահմանել աշխատանքի ծանրաբեռնվածությունը կամ դրա համարժեքը ՄԿՈՒ-ի պարագայում:

ECTS-ի (Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ) և նմանատիպ համակարգերի վերաբերյալ գրականության մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք խնդիրներ կարող են հակառակ ազդեցություն ունենալ ՄԿՈՒ կրեդիտային համակարգի վրա:

Առաջինը արդյունաբերության, ազգային կառավարությունների և այլնի ցանկությունն է կրճատել բյուրոկրատիան, սակայն միաժամանակ ունենեալ բավարար պաշտոնական երաշխիքներ գնահատման որակի վերաբերյալ: Կա նաև մի հարակից խնդիր, որ ֆորմալ վարչական համակարգերը հաճախ պահանջվում են՝ նպաստելու ՓՎԳ-ներին, ինչպիսին է օրինակ ECTS-ը (Եվրոպական կրեդիտների

փոխանցման համակարգ), բայց նաև որ այս համակարգերը կարող են դառնալ կայուն և ամրագրված և այդպիսով սահմանափակել ՓՎԳ-ների զարգացումը: Ի լրումն, չնայած առաջադիմական ձգտումներին, նրանք կարող են կապված լինել շուկայի կազմավորման առկա ձևերի հետ և վերարտադրել դրանք: (Delisle and Ryan-Bacon, 2001; Sullivan, 2002).

Նույն ձևով, այն ճանապարհը, որով ՓՎԳ-ները առաջացել են հատուկ զբաղմունքների և կարգերի մեջ, ստեղծվել է (օրինակ Կանադայի և Ֆրանսիայի միջև ինժեներության մասին երկկողմ համաձայնությունը) աջակցելու ճանաչմանը և միտված է լինելու զբաղմունքին առանձնահատուկ: Սա կրկին առաջացնում է սահմանափակումներ՝ կարգերը սահմանելով կոնկրետ մզբաղմունքների կամ ենթազբաղմունքների համար, երբ այդ նույն կարգերը կարող էին գործել ավելի լայն ոլորտներում: (Jeffries and Evetts, 2000).

Կրթության որոշ ձևերի՝ մյուսների հանդեպ ունեցած առավելության վերաբերյալ ստերեոտիպերի կայունությունը (ավանդաբար արտահայտված «ակադեմիական/մասնագիտա-կան/արհեստագործական բաժանում» ձևով) մեկ այլ խնդիր է: Մեկ այլ խնդիր է որոշակի խմբերի առնչությունը կոնկրետ տիպի աշխատանքի հետ (օր. խնամքի հետ կապված մասնագիտությունները հիմնականում առնչվում են կանանց հետ, իսկ շինարարության ոլորտի ֆունկցիաները ավելի բնութագրական են տղամարդկանց և այլն) և որոշակի տիպի փորձը, որը մարդկանց պատրաստում է կոնկրետ դերերի համար (Clayton, 2000).

Վերջիվերջո շատ տարբեր են այն ձևերը, որոնցով ազգային համատեքստը առնչվում է ՓՎԳ-ների գոյության և գործունեության հետ, աշխատաշուկայի զարգացման վիճակի, հասարակության ձևի վերաբերյալ, ինչպես նաև պետություն-աշխատաշուկա հարաբերությունների (կարգավորման) առումով: Գոյություն ունի նաև հարաբերական կախվածություն պաշտոնական գնահատումից և որակավորումից /սերտիֆիկացիա/ և ազգային վարչարարների հարաբերական հակում՝ միջամտելու և ստեղծելու բյուրոկրատիա: (Di Francesco, 2004; Brown and Keep, 1999; Kivineno and Nurmi, 2003).

Գրականությունը նաև մատնանշում է, որ գնահատման գործընթացը կլինի խնդրահարույց: Գնահատումը պետք է ընկալվի ավելին, քան որպես ընթացակարգ. գոյություն ունեն մշակութային տարբերություններ տարբեր երկրների մարդկանց կողմից գնահատման ընկալման և արձագանքի առումով: Սա ՓՎԳ-ների գործունեության ոլորտում մի քանի կարևոր հարցեր է առաջացնում.

(ա) Որո՞նք են ՓՎԳ-ների կանոնները: Կա արդյո՞ք մի պաշտոնական ցուցակ, որին օրենսդրությամբ կարգավիճակ է շնորհվել (օր. գործունեության լիցենզիա):

(բ) Որքանո՞վ են բաց կամ փակ պաշտոնական և ոչ պաշտոնական ցուցակները. արդյո՞ք նրանք ընդգծում են ընդհանուր կրեդիտը, թե՞ հատուկ կրեդիտը:

(գ) Ո՞վ է որոշում կայացնում որակավորումը ցուցակում ընդգրկելու մասին, կամ էլ առ այն, որ տվյալ որակավորումը բավարար է աշխատանքում կամ ուսուցման ծրագրում ներգրավվելու համար:

(դ) Ո՞վ է փաստեր ներկայացնում կամ նախաձեռնում հետազոտություն որակավորման արժանիքների մասին. որոշ երկրներում կան հետազոտական կենտրոններ (օրինակ Մեծ Բրիտանիայում NARIC-ը (ազգային ակադեմիական փոխճանաչման տեղեկատվական կենտրոն), ո՞վ է աջակցում այս ֆունկցիայի կատարմանը:

(ե) Նույնիսկ (ոլորտային/ազգային,միջազգային) շրջանակների և թվարկումների գոյության պարագայում, ինչ-որ մեկը դեռ պետք է որոշի, թե արդյո՞ք տվյալ որակավորումը կամ փարձը համապատասխանում է նշված պահանջներին: Ի՞նչ ազգային կարգեր պետք է գոյություն ունենան, որպեսզի միջազգային շրջանակներում ընդունված որոշումները տեղ հասցնեն:

(զ) Տեղեկատվության ինչպիսի՞ փոխանակում կա տարբեր ցանկեր ունեցող կազմակերպությունների միջև: Արդյո՞ք առաջանում են կարգավիճակի, արժանիքի և այլնի հետ կապված հակասություններ, ուր տարբեր ոլորտների մարմինները նույն որակավորմանը վերաբերվում են տարբեր ձևերով: Այլ կերպ ասած, արդյո՞ք մարմինների միջև գոյություն ունեցող ինստիտուցիոնալ սահմանները ստեղծում են անարդյունավետություն և հակասություններ աշխատանքային շուկայի կամ կրթության համակարգի հետ կապված փոխադարձ վստահության համակարգերի համար:

(է) Ի՞նչ աստիճանի հաշվետվողականություն ու թափանցիկություն կա գործունեության լիցենզավորման վերաբերվող պաշտոնական կարգերում (օրենսդրությամբ ամրագրված) և, ի հակասումն, և ոչ պաշտոնական ՓՎԳ-ներում, որոնք առաջանում են կարճաժամկետ աշխատաշուկայի պահանջներից (հմտությունների բացեր/պակաս):

7. ՏԱԽ-ի համար հետագա քննարկումներ

Ծրագրի թիմը՝ կատարելով գրականության վերանայում, քաղաքականության և գործնականի ուսումնասիրություն և աշխատելով տեխնիկական մասնագետների հետ, նախանշել է հետևյալ հրատապ խնդիրները որպես ոլորտներ, որոնց համար հետագա հետազոտություններն ու զարգացման աշխատանքը, ինչպես նաև քաղաքականություն մշակողների ուշադրությունը, օգտակար կլինեն:

7.1. Առաջարկվող մակարդակների համար տեխնիկական ձեռնարկի մշակում

Առաջարկվող համակարգի կիրառումը ազգային համակարգերում պահանջում է մակարդակների համահունչ վերարտադրություն/թարգմանություն, նախադեպի հստակ օրինակներ և համակարգված մոտեցում՝ վերլուծելու մակարդակներին առնչվող որակավորումները/ծրագրերը: Առաջարկվող նոր շրջանակը պահանջում է հարակից տեխնիկական ուղեցույց, որը կօգտագործի ISCED շրջանակի հարակից ձեռնարկի նմանատիպ մոտեցումը: Սա սույն ծրագրի սահմաններից դուրս է: Ծրագրի թիմը համարում է, որ նման ձեռնարկի մշակումն էական կլինի ազգային համակարգերում արդյունավետ իրագործման համար:

7.2. Ստեղծել կապեր մակարդակների և կրեդիտային համակարգերի միջև

ԵՄ պետություններում առաջ եկող կրդիտային շրջանակները սովորաբար կախված են մակարդակների շրջանակից: Կրեդիտի աճող կարևորությունը (հաճախ կապված կրթության և վերապատրաստման, լայնածավալ փոխճանաչման, ճկունության և կապակցվածության վերաբերյալ քաղաքականության մղումների հետ) նշանակում է, որ կարևոր է բացահայտել և ստեղծել հստակ կապ կրեդիտների կուտակման և առաջարկվող վերամշակված մակարդակների միջև:

7.3. Վարչական մեխանիզմներ և գործիքներ՝ աջակցելու վերամշակված մակարդակներին

Մակարդակների ցանկացած շրջանակ և դրա հարակից փոխադարձ վստահության գործիները պահանջում են օժանդակող վարչական կարգեր, օրինակ կապելու որակավորումների սահմանումը և այլն մակարդակների հետ, երկկողմ և բազբակողմ քննարկումներ աշխատաշուկայի կարգավորման և որակավորումների հետ կապի վերաբերյալ: Թե՛ ազգային, թե՛ ԵՄ վարչակազմերը պետք է քննարկեն ակտիվ միջամտության/օժանդակության քաղաքականությունը փոխադարձ վստահության գոտիների առումով: Սա հատկապես վերաբերվում է այն սկզբունքին և նախադեպին, երբ թե՛ արդարացված է և թե՛ օգտակար միջամտելը կամ օժանդակելը կոնկրետ փոխադարձ վստահության գոտիներին, կամ, հակառակ դեպքում, որոշում պետք է կայացնել հանգիստ թողնելու նրանց, երբ վերջիններս առանց միջամտության կամ օժանդակության գործում են արդյունավետորեն:

7.4. Գնահատում և վերահսկողություն

Այն ձևը, որով գործում են վերամշակված մակարդակները, պետք է ուսումնասիրվի՝ հատկապես ավելի բարելավված թափանցիկության, փոխադարձ վստահության աճի և կրթության ու աշխատանքի

առավել մատչելիության տեսակետից: Սա պետք է ներառի ազդեցության վերահսկողություն՝ գործածելով կատարողականի մի շարք սահմանված միջոցներ, որոնք կապված են ԵՄ քաղաքականության պարտավորությունների հետ:

Հավելված 1. ISCED 97

Կրթության միջազգային չափորոշիչների դասակարգում (ISCED), ՅՈՒՆԵՍԿՕ				
Բովանդակության լիազորված չափանիշներ			Կոդ	Լրացուցիչ չափումներ
Հիմնական չափանիշներ	Երկրորդական չափանիշներ			Մակարդակի անվանումը
Կրթական առանձնահատկություններ, դպրոցի կամ միջինացված նվազագույն տարիք, տարիքի առավելագույն սահման	Անձնակազմի որակավորում		0	
Ընթերցանության, գրավորի և մաթեմատիկայի կանոնակարգված ուսուցման սկիզբ	Պետության կողմից սահմանված առաջին հաստատության կամ ծրագրի մուտք, պարտադիր կրթության սկիզբ	Տարրական կրթության առաջին փուլ կամ հիմնական կրթություն	1	Նախատարրական կրթություն
Առարկայի ներկայացում, հիմական հմտությունների ամբողջական ներդրում/մշակում և ցկյանս ուսումնառության հիմքի ստեղծում	Մուտք վեց տարի տարրական/նախնական կրթությունից հետո, պարբերաշրջանի ավարտ ինը տարի հետո տարրական կրթությունը սկսելուց հաշված, պարտադիր կրթության ավարտ, որոշ ուսուցիչներ դասավանդում են իրենց մասնագիտացման ոլորտի առարկաներ	Միջնակարգ կրթություն առաջին մակարդակ) հիմնական կրթության երկրորդ փուլ	2	Հաջորդող կրթության տեսակ կամ նպատակակետ ծրագրի կողմնորոշում
Մուտքի տիպային որակավորում Մուտքի նվազագույն պահանջ		(Երկրորդ մակարդակի) միջնակարգ կրթություն	3	Հաջորդող կրթության տեսակ կամ նպատակակետ ծրագրի կողմնորոշում ընդհանուր տևողություն սկսած ISCED-ի 3-րդ մակարդակից
Մուտքի պահանջ, բովանդակություն, տարիք, տևողություն		Հետ միջնակարգ, ոչ բարձրագույն կրթություն	4	Հաջորդող կրթության տեսակ կամ նպատակակետ, ընդհանուր տևողություն սկսած

				ISCED-ի 3-րդ մակարդակից ծրագրի կողմնորոշում
Մուտքի նվազագույն պահանջ, ստացված որակավորման տեսակ, տևողություն		Բարձրագույն կրթության առաջին փուլ (ուղղակիորեն չտանելով դեպի կատարելագործված հետազոտական որակավորում)	5	Ծրագրերի տեսակներ, ընդհանուր տեսական տևողությունը բարձրագույն կրթության ազգային աստիճանում և որակավորման կառուցվածքը
Հետազոտությանը միտված բովանդակություն, թեզի կամ ատենախոսության հանձնում	Պատրաստել շրջանավարտներին դասախոսական կամ հետազոտական պաշտոնների համար	Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակ (տանելով դեպի կատարելագործված հետազոտական որակավորում)	6	Չկա

Հավելված 2. ISCO և ISCED մակարդակներ

ISCO հմտության մակարդակ	ISCED կարգեր
Առաջին հմտության մակարդակ	ISCED կարգ 1, որը ներառում է տարրական/նախնական կրթությունը, որը սկսվում է հինգից յոթ տարեկան հասակում և տևում է մոտավորապես հինգ տարի:
Երկրորդ հմտության մակարդակ	ISCED կարգեր 2 և 3, ներառում է միջնակարգ կրթության առաջին և երկրորդ մակարդակները: Առաջին մակարդակը սկսվում է 11 կամ 12 տարեկան հասակում և տևում է մոտավորապես երեք տարի, մինչդեռ երկրորդ մակարդակը սկսվում է 14-ից 15 տարեկանում և ևս տևում է մոտ երեք տարի: Աշխատանքի ընթացում ուսուցման ժամանակահատվածը կարող է անհրաժեշտ լինել, որը երբեմն ֆորմալացվում է որպես արհեստագործություն: Այս ժամանակահատվածը կարող է լրացնել ֆորմալ ուսուցմանը կամ կարող է մասնակիորեն փոխարինել նրան, իսկ երբեմն՝ նաև լիովին:
Երրորդ հմտության մակարդակ	ISCED կարգ 5 (կարգ 4-ը դիտմամբ թողնվել է առանց բովանդակության), ներառում է կրթությունը, որը սկսվում է 17-ից 18 տարեկանում և տևում է մոտ չորս տարի և արժանացնում է մի աստիճանի, որը համարժեք չէ համալսարանի առաջին աստիճանին:
Չորրորդ հմտության մակարդակ	ISCED կարգ 6 և 7, ներառում է կրթությունը, որը սկսվում է 17-ից 18 տարեկանում և տևում է մոտ չորս տարի կամ ավելի և հանգեցնում է բուհական կամ հետբուհական աստիճանի կամ դրա համարժեքին:

Հավելված 3. Եվրոպական կրթական մակարդակները, 1985

Մակարդակ 1

Այս մակարդակում ուսուցման մատչելիությունը՝ պարտադիր կրթություն և մասնագիտական կողմնորոշում/հիմնադրում: Այս կողմնորոշումը ձեռք է բերվում ուսումնականան հաստատությունում, արտադպրոցական ուսուցման ծրագրում կամ անձի նախաձեռնությամբ: Տեսական գիտելիքի և գործնական կարողությունների ծավալը խիստ սահմանափակ է: Այս տեսակի ուսուցումը պետք է առաջին հերթին սովորողին պատրաստի կատարելու հարաբերականորեն հեշտ աշխատանք և կարող է ձեռք բերվել բավականին արագ:

Մակարդակ 2

Այս մակարդակում ուսուցման մատչելիությունը՝ պարտադիր կրթություն և մասնագիտական ուսուցում (ներառյալ, հատկապես, արհեստագործություն). Այս մակարդակը համապատասխանում է այն աստիճանին, երբ ուսուցանվողը լիովին որակավորված է զբաղվելու կոնկրետ գործով՝ դրան առնչվող բոլոր գործիքների և տեխնիկայի գործածության կարողություններով: Այս գործունեությունը հիմնականում ներառում է աշխատանքի կատարողականը, որը կարող է լինել անկախ՝ դրան առնչվող մեթոդիկայի սահմաններում:

Մակարդակ 3

Այս մակարդակում ուսուցման մատչելիությունը՝ պարտադիր կրթություն և/կամ մասնագիտական ուսուցում և լրացուցիչ տեխնիկական ուսուցում կամ տեխնիկական կրթական ուսուցում, կամ այլ լրացուցիչ ուսուցում: Ուսուցման այս ձևը ընդգրկում է ավելի լայնածավալ տեսական գիտելիքներ, քան մակարդակ 2-ը: Գործունեության մեջ հիմնականում մտնում է տեխնիկական աշխատանքը, որը կարող է ինքնուրույն կատարվել, և/կամ ենթադրում է գործադիր կամ համակարգման պարտավորություններ:

Մակարդակ 4

Այս մակարդակում ուսուցման մատչելիությունը՝ հանրակարթական ուսուցում (ընդհանուր կամ մասնագիտական) և հետ հանրակրթական տեխնիկական ուսուցում: Այս տեսակի ուսուցումը ներառում է բարձրակարգ տեխնիկական ուսուցում, որը ձեռք է բերված ուսումնական հաստատությունում կամ դրանից դուրս: Արդյունքում ստացված որակավորումը ընդգրկում է գիտելիքի և կարողությունների ավելի բարձր մակարդակ: Սովորաբար այն չի պահանջում մասնագիտացման տարբեր ոլորտների գիտական հիմքերի իմացություն: Նման կարողություններն ու գիտելիքը հնարավորություն են տալիս անկախ ձևով իրականացնելու պլանավորման/դիզայնի և/կամ կառավարման և/կամ վարչարարական պարտավորություններ:

Մակարդակ 5

Այս մակարդակում ուսուցման մատչելիությունը՝ հանրակարթական ուսուցում (ընդհանուր կամ մասնագիտական) և ամբողջական բարձրագույն ուսուցում: Այս տեսակի ուսուցումը հիմնականում հանգեցնում է անկախ մասնագիտական գործունեության՝ որպես աշխատող կամ ինքն իր համար աշխատանք գտնող մարդ, և նախատեսում է զբաղմունքի ոլորտին առնչվող գիտական հիմքերի իմացություն: Որակավորումները, որ պահանջվում են մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար կարող են ինտեգրվել այս տարբեր մակարդակների մեջ:

Հավելված 4. Խնդիրների բարդության և մտածողության տեսակների ժակի մակարդակները

Խնդիրների բարդության մակարդակներ վերցված ժակից (1996)

Խնդրի պահանջը	Խնդրի բարդությունը	Մտածողություն և գործողություն
Մակարդակ 7	Ռազմավարական տարբերակներ, այլընտրանքային ճանապարհներ, փոխակերպում իրականացնող համակարգեր	Նրանք պետք է ձգտեն այլընտրանքային խոշոր պլանների, որոնք կստեղծեն գործարար միավորներ՝ զարգացնելով, տիրանալով, միավորվելով կամ համատեղ ձեռնարկություններ ստեղծելով՝ ֆինանսավորումը թողնելով միջազգային ֆինանսական ռեսուրսների վրա: Նրանք օգտագործում են կոնցեպտուալ համառոտ տեղեկատվության բարդություն և հաջորդական ուղղվածության կառուցում և առաջադիմություն:
Մակարդակ 6	Տվյալների հավաքագրում՝ ընդհանուր ուսումնասիրության և ախտորոշման համար	Նրանք ստեղծում են ցանցեր կուտակելու ախտորոշիչ տեղեկատվություն և ստեղծում են մի բարենպաստ միջավայր՝ հնարավորություն տալով դատելու կորպորատիվ ներդրումների առաջնահերթությունների մասին, բարձրացնելու կորպորատիվ արժեքների արժեքը բալանսի մեջ և նպաստելու կորպորատիվ հաջողություններին և գոյատևմանը: Նրանք գործածում են կոնցեպտուալ համառոտ բարդության կուտակային մեթոդը:
Մակարդակ 5	Փոփոխությունների հետևանքների գործնական տեսակետներ/գնահատականներ	Նրանք կարող են գլուխ հանել ուղղակի գործողության ձևերից՝ բազմաթիվ փոփոխականների գործողությունների և հետևանքների մշտապես փոփոխվող կալեիդոսկոպով՝ դրանք ցույց տալով ծրագրի նախագծի վրա: Նրանք զգում են կազմակերպության փոփոխականների և միջավայրի միջև եղած փոխկապվածությունը և շարունակաբար դրանք հարմարեցնում են իրար՝ զգալով բոլոր երկրորդ և երրորդ կարգի ազդեցությունը: Նրանք գործածում են կոնցեպտուալ համառոտ բարդության հոչակային/հրապարակային մեթոդը:
Մակարդակ 4	Զուգահեռ մշակում և փոխզիջում	Նրանք կարող են միաժամանակ ընթացք տալ մի քանի փոխազդող ծրագրերի՝ դրանք առաջ տանելով ժամանակի և ռեսուրսների առումով

		իրար կապված ձևով: Նրանք կարող են փոխ-զիջումների գնալ խնդիրների/հանձնարա-րությունների միջև՝ պահպանելու առաջընթացը նպատակին հասնելու դժվարին ճանապարհին: Նրանք գործածում են սիմվոլիկ բանավոր տեղեկատվության բարդությունը, զուգահեռ մշակումը:
Մակարդակ 3	Նպատակին հասնելու այլընտրանքային ճանապարհների մշակում	Նրանք գործածում են ուղիղ գործողություն պլյուս ախտորոշիչ կուտակում, բայց նաև պետք է կարողանան ներառել պլանի սահման-ներում ամբողջական գործընթացը, որը նպա-տակին հասնելու ճանապարհ ունի, որը դուք արդեն մշակել եք: Եթե կարիք լինի, նրանք պետք է կարողանան մշակել այլընտրանքային պլաններ: Նրանք գործածում են սիմվոլիկ բանավոր տեղեկատվության բարդությունը և հաջորդականության մեթոդը:
Մակարդակ 2	Տվյալների հավաքագրում և ախտորոշում	Նրանք ոչ միայն հաղթահարում են անմիջական խոչընդոտները ուղղակի գործողության օգնությամբ, այլ նաև ի վիճակի են մտորել տեղի ունեցող իրադարձության շուրջ՝ այդպիսով կարողանալով ակնկալել հնարավոր խոչընդոտները: Նրանք կուտակում և գիտակցորեն տեսակավորում են տվյալները՝ ախտորոշելու խնդիրներն ու կանխարգելելու սպասվելիքները: Նրանք գործածում են սիմվոլիկ բանավոր տեղեկատվության բարդությունը և կուտակման մեթոդը:
Մակարդակ 1	Ուղղակի դատողություն	Անհատը հետևում է նպատակին հասնելու աստիճանական ուղին՝ ստանալով շարունակական արձագանքներ առաջ գնալու և գործածելով նախկինում սովորած մեթոդները անմիջական խոչընդոտները հաղթահարելու կամ հաշվետվության համար: Նրանք գործածում են սիմվոլիկ բանավոր տեղեկատվության բարդությունը և հռչակային/հրապարակային մեթոդը:

Մտածողության տեսակներ

Տեսակը	**Նկարագիրը**
Հռչակային/հրապարակային մեթոդ	Տալիս է ինչ-որ բանի համար մի քանի բոլորովին առանձին պատճառներ:
Կուտակային մեթոդ	Տալիս է ինչ-որ բանի համար մի քանի առանձին պատճառներ, որոնք ներկայացվում են որպես կշիռ ունեցող, երբ վերցվում են միասին:
Հաջորդականության մեթոդ	Տալիս է պատճառների հերթականությունից գոյացած մտածելու ուղղություն, որոնցից յուրաքանչյուրը տանում է հաջորդին՝ այդպիսով ստեղծելով պատճառական շղթա:
Զուգահեռ մեթոդ	Մտածողության մի քանի ուղղություններ կարող են պահվել զուգահեռ և որոշ կետում կարող են կապված լինել միմյանց, այնպես որ մի ուղղության հիմնավորումը կարող է աջակցել մյուսին՝ նպաստելու նախընտրելի արդյունքին:

Հավելված 5. Դրեյֆուսի ընդունած «կարողությունների աստիճան»

Մակարդակ	Նկարագիր	Ուսուցման մեթոդների նկարագիր (% իրականացում)*	Ծրագրավորման ապահովման ինժեներիայի օրինակներ
Նորելուկ (սկսնակ)	Նոր սկսում է տվյալ ոլորտում: Բոլոր գործողությունները կառավարվում են կարգերով, որոնք սահմանում են թույլատրելի քայլերն ու ռազմավարությունները: Ընդհանուր իրավիճակները անծանոթ են և նկարագրվում են ավելի շատ կանոններով:	Մտապահում, վարժեցում և պարզ գործածում: Գործողության/խաղի ցուցադրում: Իրականացում պարզ իրավիճակներում: (0%).	Սկսնակ ծրագրավորող: Կենտրոնանում է կառուցվածքի, տվյալների հավաքագրման և սխալների ուղղման վրա: Առարկաների հիմնական/պարզ հասկացություններ: Պարզ/հիմնական ալգորիթմներ:Պարզ/հիմնական ծրագրային դիզայն, ծրագրային ապահովման մեթոդներ:
Առաջանցիկ սկսնակ (նորեկ)	Ճանաչում է այն հիմնական իրավիճակները, որոնք օգնում են մտաբերելու, թե ինչպիսի կանոններ պետք է գործածվեն: Հիմնական գործողությունները կանոնների դիտմամբ կիրառումն է կամ ծանոթ իրավիճակներում նախկին գործողությունների գիտակցորեն վերհիշումը: Հաճախորդների համար կարող է պարզ գործողություններ իրականացնել. կարիք ունի վերահսկողության՝ ավելի բարդ գործեր կատարելիս:	Խնդիրների լուծում և գործնական աշխատանք կանոններով և ռազմավարություններով: Իրական իրավիչակներում գործունեությունը վերահսկողության միջոցով: Ընդհանուր իրավիճակների կրկնություն գործնականում (30%):	Կառուցվածքի առումով հանգիստ է: Ստեղծում է հիմնական ծրագրեր՝ լուծելու մինչև մի քանի էջի և տասնյակ միավորների/մոդուլների սահմանում խնդիրներ: Կարող է հաճախորդների համար գրել հիմնական/տարրական ծրագրեր: Ցուցումներով լավ աշխատում է:
Մասնագետ (բանիմաց)	Իրականացնում է ստանդարտ գործողություններ առանց խափանումների: Կարող է բավարար չափով իրականացնել հաճախորդների ստանդարտ պայմանագրային	Խնդիրների լուծման զարգացած ունակություններ, խնդիրների լուծման և ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն/ուղղորդում: Ընդհանուր և	Հմուտ է մի քանի լեզուների մեջ: Գործ ունի հարյուրավոր միավորների/մոդուլների ծրագրերի հետ: Նախագծում է համակարգեր և փորձարկման

	պարտավորություններն առանց վերահսկողության: Հիմնական ստանդարտ գործողություններն իրականացնում է առանց կանոնների հատուկ կիրառության: Երբ հանդիպում է նոր իրավիճակի, գտնում է համապատասխան ելք՝ կանոնների կիրառման միջոցով:	բացառիկ իրավիճակների խորը գործնական կիրառություն: Ուսուցում ավելի զարգացած մասնագետների և թիմերի: Մասնագիտական ցանցերի անդամություն: (60%).	արձանագրություններ, ինտեգրում է բաղադրիչներ, օգնում է հաճախորդներին լուծելու համակարգի դիզայնի և տեսքի (կոնֆիգուրացիա) հետ կապված խնդիրներ: Կարող է աշխատել թիմերում և հաճախորդների հետ: Կարող է լինել թիմի առաջնորդ:
Փորձառու մասնագետ (աստղ)	Առանց մեծ ջանքերի գործ է ունենում բարդ իրավիճակների հետ: Հազվադեպ է մտածում կանոններով և կարող է դժվարություններ ունենալ մյուսներին պատմելու, թե ինչ կանոններով է ինքն աշխատում: Համապատասխան գործողությունը ծագում է փորձից և կանխազգացումից, կամ դիտմամբ ընդտրված է: Անհատական աշխատառոճը մյուսների համար հենանիշ է: Տարիների աշխատանքի արդյունքում մի շարք իրավիճակների զգալի փորձ և գործնական իմացություն:	Ուսուցում փորձագետներին: Խորհրդատվություն/ուղղորդում: Ես-ը դնելով մի շարք իրավիճակներում: Անդամություն և ներդրում մասնագիտական ցանցերում: Սովորեցնում է մյուսներին (80%):	Խիստ արդյունավետ: Նախագծում և կառավարում է բարդ համակարգեր: Յուրահատուկ լուծումներ: Հասկանալի կոդ: Գերազանց խնդիրներ լուծող: Արդյունավետությունը՝ շատ ավելի բարձր միջինից: Հաճախորդներից և այլ մասնագետներից ստանում է բարձր գնահատականներ:
Փորձագետ/ էքսպերտ (վիրտուոզ)	Մշտապես ներշնչող և գերազանց կատարողական: Առանց ջանքերի լուծում է դժվար ու բարդ խնդիրներ: Գիտելիքի հսկայական ծավալ և խորություն: Գործում է համապատասխանաբար՝ առանց գործողությունների մա-	Ուսուցում վարպետի (master): Առաջանցիկ խորհրդատվություն/ուղղորդում, ծավալների մեծացում, կենտրոնացում ուսուցչի ոճի ուսումնասիրության և ընդունման վրա: Ուսուցանում է մյուսներին:	Խոշոր համակարգերի հետ աշխատելու մեծ փորձ: Ակնկալում է նուրբ և ոչ ուղղակի դիզայնի խնդիրներ: Ակնկալում և արձագանքում է հաճախորդների անհանգստություններին: Լավ առանջնորդում է թիմերը: Բարձր

	սին մտածելու և հատուկ ընտրելու: Կանոնավոր կերպով կազմավորում և առաջնորդում է բարձր կատարողականություն ցույց տվող թիմերին: Մյուսների համար ծառայում է որպես թիմային աշխատանքի հենանիշ: Աշխատանքի ստանդարտները շատ ավելի բարձր են բազմաթիվ պրակտիկ մասնագետների ստանդարտներից:	Գործնական փորձի տարիներ կամ տասնամյակներ (95%):	արդյունավետություն: Արագ լուծում է տեսքի/ կոնֆիգուրացիայի և աշխատանքային բարդ խնդիրներ:
Վարպետ (Master)	Ռազմավարական մտածողության և գործողության մի շարք կարողություններ: Տեսնում է պատմական շեղումները և փոփոխվող հստակեցումները: Սովորել է բազմաթիվ տարբեր ուսուցիչների մոտ և մշակել է սեփական տարբերվող ոճը: Մյուսների ստանդարտ աշխատակարգում առաջարկել է նորարարություններ, փոխել է ոլորտի պատմության ընթացքը և գիտի, թե ինչպես դա անել կրկին: Մյուսներին սովորեցնում է դառնալ էքսպերտ և վարպետ:	Ուսուցումը շարունակվում է մյուս վարպետների՝ որպես ուսուցիչների հետ աշխատելով: Ստեղծում և առաջնորդում է մասնագիտական ցանցեր: Ուսուցանում է ուրիշներին (100%):	Մշակում է ոլորտի համար նոր մեթոդներ և գործնական կիրառություն: Հիացմունք է առաջացնում երկար, պատմական հեռանկարների և ռազմավարությունների համար:
Լեգենդ	Ձեռք է բերել հանրային բարձր դիրք վարպետի (master) և գործնական աշխատողի գրեթե առասպելական կարգավիճակով: Հանրային դիրքի լծակներն օգտագործում	Նույնը, ինչ որ վարպետն՝ շեշտադրումը դնելով հանրային ներկայացվածության վրա (100%):	Ծրագրավորման ապահովման մեծապես ընդունված ինժեներ, ով հրապարակայնորեն ստեղծել է տեմպ մնացած բոլորի համար: Նրա մտքերը ձևավորում են ոլորտի

	է հասնելու այնպիսի արդյունքների, որոնց կարող են հասնել միայն պետական դեմքերը: Աշխատանքը մեծապես ընդունել է ազդեցությունը:		ուղղվածությունը:

Տոկոսային թվերը վերաբերվում են իրականացմանը, որը կարող է հասկացվել որպես կիրառության կամ կարողության պատրաստվածություն, որը ներքաշում է գիտելիք կամ հմտություններ և դրանք վերածում է անմիջական արդյունավետ աշխատանքի: Փիթեր Դենինգն այս նկատառումն առաջարկում է՝ աջակցելու Դրեյֆուսի տեսությանը՝ համակարգիչների և բարձրակարգ մասնագետների հեռահար ուսուցման հարաբերական անհամապատասխանության մասին:

Հավելված 6. Լեզվի զարգացման մակարդակներ

Տարրական մակարդակներ	Մակարդակների երկրորդ շարք	Մակարդակի մեկնաբանություն՝ օգտագործելով բանավոր լեզուն
Տարրական օգտագործող	Նվաճումներ/հաջողություններ	Պարզ բառեր և բառակապակցություններ՝ նկարագրելու, թե որտեղ եմ ես ապրում և ում եմ ճանաչում
	Ընթացք	Բառակապակցությունների և նախադասությունների շարք՝ նկարագրելու մարդկանց, ապրելու պայմանները, կրթությունն ու աշխատանքը:
Անկախ օգտագործող	Շեմ	Կապում է բառակապակցությունները՝ նկարագրելու փորձն ու դեպքերը, երազանքները, հույսերն ու նպատակները: Տալիս է կարծիքների և պլանների վերաբերյալ պատճառներ: Պատմվածքի շարադրում:
	Առավելություն	Առարկաների լայն շարքի մանրամասն նկարագրություն: Նկարագրում է մի թեմատիկ հարցի մասին տեսակետ և տալիս տարբերակների մանրամասներ:
Փորձառու օգտագործող	Արդյունավետ գործառնական փորձառություն	Բարդ առարկաների հստակ, մանրամասն նկարագրություն՝ ինտեգրելով ենթա-թեմաներ, զարգացնելով յուրահատուկ տեսակետ և ամփոփելով եզրակացությամբ:
	Լրիվ տիրապետում	Հստակ, բարեհունչ նկարագիր կամ փաստարկ այն ոճով, որը համապատասխանում է համատեքստին, և տրամաբանական կառուցվածքով, որը օգնում է ունկնդրին գնահատելու և մտապահելու կարևոր կետերը:

Հավելված 7. Հմտությունների մակարդակներ

Զբաղմունքի արդյունք	Ներառում է
Կիսահմուտ աշխատող	
Հմուտ աշխատող	արհեստագործ կամ առևտրական
Տեխնիկ	Վերահսկող, տեխնիկական օգնական կամ առաջատար արհեստագործ
Բարձրագույն տեխնիկ	Հմուտ արհեստագործ, օգնական կամ պարամասնագետ

Հավելված 8. ԿՏ ուսուցման մակարդակների առանձնահատկություններ (Fachhochschulen, Baden Wurtemburg)

Հիմնական մակարդակի բնութագրիչ	Ենթամակարդակներ	Կեքստի օրինակ (օրինակ վերցված 4 մակարդակներից)
Գործող համատեքստ	Համատեքստի հատկությունները	Մ1: սահմանցած համատեքստ, որը պահանջում է ստանդարտացված մեթոդների կիրառություն
	Անկախության աստիճանը	Մ4: բարդ, անակնկալ և սովորաբար մասնագիտացած՝ պահանջելով նորարարական աշխատանք
	Վարքի ընկալում	Մ3: անձնական պատասխանատվության և մասնագիտական վարքի սկզբունքների գիտակցում
Ճանաչողական բնութագրիչ Հատկանշական փորձնակներ	Գիտելիք և հասկացողություն	Մ2: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեկ (կամ մի քանի) ոլորտի մանրամասն գիտելիք
	Վերլուծություն	Մ4: ի վիճակի է գլուխ հանել հիմնական/տարրական գիտելիքի բարդությունից, բացերից կամ հակասություններից
	Սինթեզ/ստեղծագործականություն	Մ3: կարող է վերացական տվյալներն ու հասկացությունները տեղափոխել կոնկրետ իրադրության մեջ և նախագծել նորարարական լուծումներ՝ թեթև ուղղորդմամբ
	Գնահատում	Մ1: սահմանված մեթոդներով կարող է գնահատել տվյալների հուսալիությունը
Լրացուցիչ փոխադրելի հմտություններ փորձնակներ	Խնդիրների լուծում	Մ3: կարող է վստահորեն ճանաչել և սահմանել բարդ խնդիրները
	Ուսուցման պլանավորում և կազմակերպում	Մ2: Ձեռք բերել ուսուցման ռեսուրսների մատչելիություն և գործածել դրանք

	Հաղորդակցություն և ներկայացում	Մ1: կարող է հաղորդակցվել ուսուցմանը հարիր ձևով և կատարել ուրիշների առջև ստանձնած պարտավորությունները
	Ինքնագնահատման գործընթացի արտացոլում	Մ4: զգում է իրեն որպես գիտական կողմնորոշման հանրության մի մաս: Ըստ սովորության արձագանքում է սեփական և ուրիշների փորձին՝ բարելավելու սեփական աշխատանքը:

Հավելված 9. Ֆորմալ ազգային որակավորումների շրջանակներ, որոնք ուսումնասիրվել են որպես սույն ծրագրի մի մաս

1. Ավստրալիա

Ավստրալիայի որակավորումների շրջանակ**ի սխեմա (ԱՈՇ)**

Դպրոցական ոլորտ	**Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտ**	**Բարձրագույն կրթության ոլորտ**
Միջնակարգ (ավագ) կրթության վկայական	Առաջատար դիպլոմ Դիպլոմ Վկայական IV Վկայական III Վկայական II Վկայական I	Դոկտորի աստիճան Մագիստրոսի աստիճան Ավարտական դիպլոմ Ավարտական վկայական Բակալավրի աստիճան Առաջատար դիպլոմ Դիպլոմ

1.1. Ի՞նչ է ԱՈՇ-ը (Ավստրալիական որակավորման շրջանակ)

ԱՈՇ-ը գործում է որպես քաղաքականության գործիք, որը իրար է կապում վերոնշյալ որակավորումները և ապահովում է որակավորումների երաշխավորված ազգային համակարգ: Այն սովորողներին թույլ է տալիս լինել ճկուն՝ պլանավորելու իրենց կարիերաները:
Շրջանակը ներդրվել է Ավստրալիայում 1995թ-ի հունվարի 1-ից և փուլայնացվել է հինգ տարվա ընթացքում՝ ամբողջական իրագործումն ապահովելով 2000թ-ին:

1.2. ԱՈՇ-ի հիմնավորումն ու նպատակները

ԱՈՇ-ը միտված է աջակցելու ողջ կյանքի ընթացքում ուսուցմանը. այն օգնում է սպառողներին գտնելու իրենց ճանապարհը որակավորումների համակարգի միջոցով: Սա դիտվում է նույնքան կարևոր, որքան որ առանց հմտությունների աշխատանքի հնարավորության վերացումը, որը ստիպեց մարդկանց ավելցնելու իրենց հմտությունները ամբողջ աշխատանքային կյանքի ընթացքում: ԱՈՇ-ն միավորում է աշխատանքից բխող և ակադեմիական որակավորումները մեկ շրջանակում, որպեսզի ապահովի ճկունություն կարիերայի պլանավորման հարցում:

1.3. Գլխավոր նպատակները

ԱՈՇ-ն պետք է:

- ապահովի հետ-պարտադիր կրթության արդյունքների ազգային մակարդակով կայուն ճանաչում,
- օգնի մշակելու ճկուն ուղիներ, որոնք կօգնեն մարդկանց ավելի հեշտությամբ շարժվելու կրթության և ուսուցման ոլորտների միջև և այդ ոլորտների ու աշխատաշուկայի միջև՝

ապահովելով նախկին կրթության ճանաչման հիմքեր՝ ներառյալ կրեդիտների փոխանցումն ու աշխատանքի և կյանքի փորձը,

- ինտեգրի և ռացիոնալացնի մասնակից ծառայություն մատուցողների, գործատուների և աշխատողների, անհատների և շահագրգիռ կազմակերպությունների պահանջները,
- առաջարկի ճկունություն՝ հարմարեցնելու կրթության և ուսուցման նպատակների բազմազանությունը,
- խրախուսի անհատների զարգացումը՝ կրթության և ուսուցման մակարդակների միջոցով՝ ապահովելով որակավորումների մատչելիություն, հստակորեն սահմանելով նվաճումների ուղիները և ընդհանրապես նպաստելով ողջ կյանքի ընթացքում ուսուցմանը,
- խրախուսել ավելի բարձր որակի մասնագիտական կրթության և ուսուցման ապահովումը որակավորումների միջոցով, որոնք սովորաբար համապատասխանում են աշխատանքային պահանջներին և մասնագիտական կարիքներին՝ այդպիսով նպաստելով նաև ազգային տնտեսական գործունեությանը,
- նպաստել Ավստրալիայում առաջարկվող որակավորումների ազգային և միջազգային ճանաչմանը:

1.4. Ուսումնառության ուղիներ

ԱՈՇ որակավորումները իրար հետ կապված են դպրոցների, մասնագիտական կրթության, ուսուցման ծառայություններ մատուցողների և համալսարանների միջև մի շարք ուսումնառության ուղիներով, ինչպես պահանջվում է սովորողների կողմից: ԱՈՇ-ը հատուկ հանձնառություն ունի՝ ունենալու ճկուն, թափանցիկ և համակարգված ուսուցման ուղիներ և վերացնելու կրթական սահմանները կրթության ոլորտների միջև: Այն, այդպիսով նպաստում է այպիսի խաչվող ոլորտային կապակցող ծրագրերի, ինչպիսին են՝

- ՄԿՈՒ-ն դպրոցներում, որը թույլ է տալիս ամբողջ երկրի դպրոցներում իրականացնել արդյունաբերության կողմից պահանջվող ուսուցում, որը կարող է օժանդակել թե՛ ավագ միջնակարգ կրթության վկայականին և թե՛ I-IV կարգի որակավորումների վկայականներին,
- արտահայտման և կրեդիտների փոխանցման կարգեր գրանցված մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնողների և համալսարանների միջև՝ ներառելով ծրագրերի արդյունավետ նկարագրություն և առավելագույն կրեդիտների փոխանցում,
- նախորդող կրթության ճանաչում, որով կրեդիտները տրվում են որակավորումների համար՝ անհատի՝ իր կրթության, ուսուցման, աշխատանքի և կյանքի փորձի արդյունքում ձեռք բերված գիտելիքի և հմտությունների գնահատման միջոցով:

Համալսարանից դեպի մասնագիտական կրթության և ուսուցման որակավորումներ ուղին դառնում է ավելի տարածված՝ որպես արդյունաբերության փորձի ձեռքբերման ճանապարհ, որն անհրաժեշտ է ավելացնելու աշխատանքային հնարավորությունները:

1.5. Նախկին կրթության ճանաչում

Նախկին կրթության ճանաչումը թույլ է տալիս մարդկանց ստանալու ճանաչում և կրեդիտներ իրենց ունեցած գիտելիքների և փորձի համար, անկախ նրանից, թե ինչպես և որտեղ են դրանք ձեռք բերվել, ներառյալ՝ արտասահմանը: Սա կարող է ընդգրկել հմտություններ, սկսած՝

- նախորդ ուսումից (ներառյալ դասընթացներ դպրոցում կամ քոլեջում, մեծահասակների համար դասընթացներ կամ ուսուցման/վերապատրաստման դասընթացներ աշխատավայրում),
- աշխատանքային փորձից (ներառյալ վճարովի և անվճար աշխատանքը),
- կյանքի փորձից (ինչպիսին է օրինակ, ազատ ժամանակ կատարած աշխատանքը կամ կամավոր աշխատանքը).

Նախորդ կրթության ճանաչման համար կարևորն այն է, որ սովորողների ստացած գիտելիքն ու հմտությունները օգնեն համապատասխանելու այն որակավորման կրթական արդյունքներին և գնահատման չափանիշներին, որի համար նրանք ուզում են կրեդիտ ստանալ: ՄԿՈՒ համակարգում նախորդ կրթության ճանաչման համար կատարված գնահատումը կարող է հանգեցնել կամ ամբողջական որակավորման շնորհման, կամ մասնակի ավարտման մասին քաղվածքի/տեղեկանքի:

1.6. Մակարդակներ և մակարդակների բնութագրիչներ

ԱՈՇ-ում չկան թվակալված մակարդակներ: Մակարդակների կառուցվածքի փոխարեն գոյություն ունեն որակավորումների ուղեցույցեր, որոնք սահմանում են հղման մակարդակը՝ նրա ուսուցման արդյունքի և դրան հասնելու աջանձնահատկությունների առումով: Օրինակ, դիպլոմի և առաջադեմ դիպլոմի որակավորումները, որոնք գոյություն ունեն և՛ բարձրագույն կրթության, և՛ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում, դիտվում են որպես համարժեք/հավասար, որովհետև նրանք ունեն ընդհանուր կրթական արդյունքներ և դրա համար նույն անունն են կրում, չնայած, որ մատուցման մեթոդները/կրթական ծրագրերը յուրաքանչյուր ոլորտում տարբեր են:

1.7. Շահառուները և որակավորումների ներառման հիմքերը

Աղյուսակ 8: ԱՈՇ-ի համար խաչաձև ոլորտային աջակցություն



Վերոնշյալ աղյուսակը պատկերում է համակարգի հիմնական շահառուներին: ԱՈՇ-ը քաղաքականության կոնսենսուսային գործիք է, որը հիմնվում է երեք ոլորտների միջև կարգավորող շրջանակների վրա՝ գործառնական իրականացման և կարգավորման համար: Յուրաքանչյուր ոլորտ լիազորում է իր սեփական որակավորումները և պատասխանատվություն է կրում որակավորման համար առաջին հերթին առաջարկելու, պաշտպանելու և ֆիքսելու չափորոշիչները՝ լրացված ԱՈՇ-ով: Այդպիսով, AQFAB ինքնուրույն չի հավատարմագրում որակավորումը, այլ աշխատում է այն կարգավորող մեխանիզմներով, որ գործում են ոլորտների ներսում: Համակարգն այնուհետև ապակենտրոնացվում է, քանի որ Ավստրալիան ունի ֆեդերալ պետության կարգավիճակ. կարբեր կրթական պարտավորություններ բաժանված են նահանգների, տարածքների և Միավորված (ֆեդերալ) կառավարության միջև: ԱՈՇ-ը փորձում է երաշխավորել, որ գոյություն ունի որակավորումների մեկ ազգային համակարգ, որը միավորում է այս ապակենտրոնացված պարտավորությունները: Այդպիսով, ավագ միջնակարգ կրթության վկայականի որակավորման հիմնական շահառուները յուրաքանչյուր նահանգի և տարածքի տարբեր դպրոցական խորհուրդներն են: Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում հիմնական շահառուներն են ազգային ՄԿՈՒ մարմնը, Ավստրալիայի ազգային ուսուցման լիազոր մարմինը, որոնց լրացնում են նահանգային/տարածքային ուսուցման խորհուրդները, որոնք վերահսկում են ծառայությունների իրականացման համար գրանցումը և կատարում են որոշակի

հավատարմագրում ընդդեմ ԱՈՇ-ի և Ավստրալիայի ազգային ուսուցման լիազոր մարմնի կողմից մշակված ազգային ուսուցման փաթեթից դուրս:

Արդյունաբերությունը (և միավորումներն ու գործատուները) նույնպես հանդիսանում են հիմնական շահառուներ՝ հաշվի առնելով, որ մասնագիտական որակավորումները մշակվում են արդյունաբերությունից բխող կարողությունների պահանջի հիմնա վրա:
Բարձրագույն կրթության համակարգում համալսարանները ինքնահավատարմագրում են անցնում, սակայն նրանք մեծ մասամբ առաջարկում են ԱՈՇ-ի որակավորումները. ավստրալիական փոխվարչապետի/փոխկանցլերի հանձնաժողովը բոլոր ավստրալիական համալսարանների գերագույն մարմինն է: Նաև կան փոքր թվով բարձրագույն կրթության որակավորումներ, որոնք հավտարմագրվում են տարբեր նահանգների/տարածքների կառավարության կողմից և այդպիսով այս բարձրագույն կրթության գործակալությունների շահառուները մշտապես խորհրդատվություն են տրամադրում: ԱՈՇԽՄ (AQFAB) կազմված է այս ոլորտներից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից և շահառուներից և հաշվետու է ամբողջ կրթության համար պատասխանատու ազգային լիազոր մարմնին՝ կրթության, ուսուցման աշխատանքի և երիտասարդության հարցերի նահանգային, տարածքային և ֆեդերալ նախախարություններին:

2. Նոր Զելանդիա

2.1. Ի՞նչ է ազգային որակավորումների շրջանակը

Ազգային որակավորումների շրջանակը զարգացման փուլում է եղել սկսած 1990թ-ից և մի համակարգ է, որը ստեղծված է ճանաչելու գիտելիքի, փոխըմբռնման և հմտությունների նվաճումները բոլոր Նոր Զելանդացիների կողմից: Դա մի կառուցվածք է, որը նախատեսված է կապ/համաձայնություն ստեղծելու այն որակավորումների միջև, որոնք ազգայնորեն ճանաչված են և որոնց որակն ապահովված է: Սովորողները կարող են գրանցվել շրջանակում և կուտակել կրեդիտներ ժամանակի ընթացքում՝ իրենց ցանկացած տեմպերով, քանի որ որակավորման ընթացքում նաև աշխատում: ԱՈՇ-ի որակավորումները սահմանվում են կրթական արդյունքների և կրեդիտների քանակի առումով:

2.2. ԱՈՇ-ի հիմնավորումն ու նպատակները

Նոր Զելանդիայի որակավորումների լիազոր մարմինը նշում է, որ ԱՈՇ-ը մի միջոց է, որով ազգային որակավորումներն ունեն բարձր վստահություն և՛ Նոր Զելանդիայում, և՛ արտասահմանում, և այնպես են կապված իրար հետ, որ հնարավորություն են տալիս մարդկանց բարձրացնելու իրենց որակավորումները՝ խուսափելով առանց անհրաժեշտության կրկնելու նախկին ուսումն ու գնահատումը:

ԱՈՇ-ը նաև թույլ է տալիս ճանաչելու Նոր Զելանդիայի բնիկ ժողովրդի՝ Մաորիների ավանդական գիտելիքները: Մաորի փորձագետները ներգրավված են այնպիսի գործնական ոլորտների միավորների չափորոշիչների մշակման գործում, ինչպիսիք են Ռեո Մաորի (Մաորի լեզուն) և Ֆակաիրո (փորագրություն):

Անցյալում այս առարկաները դիտվել են որպես «նախասիրություն» կամ «ժամանցային/հանգստի զբաղմունք»:

Մաորիի փորձագետները նաև ներգրավված են այնպիսի միավորների չափորոշիչների մշակման մեջ, որոնք ապահովում են ընդհանուր առարկաների Մաորիական չափումները, ինչպիսիք են բիզնես և կառավարում, զբոսաշրջություն և այլն:

Շրջանակն ապահովում է կրթություն ողջ կյանքի ընթացքում, որպեսզի մարդիկ կարողանան կարիերայում փոփոխություններ կատարել:

Ընդհանուր առմամբ, սովորողների համար շրջանակն առաջարկում է:

- ինչ, որտեղ և ինչպես սովորելու ընտրություն և ճկունություն,
- հստակ պատկերացում, թե ինչ է անհրաժեշտ ուսման մեջ կամ աշխատանքում հաջողությունների հասնելու համար,
- գիտելիքի և հմտությունների պաշտոնական ճանաչում,
- ազգայնորեն ճանաչված որակավորումներ:

Աշխատավայրում այն սովորողներին հնարավորություն է տալիս՝

- գումար վաստակել մինչդեռ սովորում են նոր հմտություններ,
- ձեռք բերել տեղափոխելի որակավորում, որը ունի ազգային և միջազգային ճանաչում,
- աշխատել փորձառու և որակավորված աշխատողների կողքին,
- ձեռք բերել գիտելիքի և հմտությունների պաշտոնական ճանաչում:

Գործատուին այն թույլ է տալիս ՝

- ունենալ կրթությունն ու ուսուցումը արդյունաբերության կողմից արդյունաբերության համար նախագծելու հնարավորություն,
- լինել ուսուցման առումով անրձագանքող նոր շուկաներին, ապրանքներին, ծառայություններին և տեխնոլոգիաներին,
- ունենալ ավելի հմուտ և հարմարվող աշխատուժ,
- վերապատրաստել աշխատակիցներին համաձայն սեփական ընկերության շրջանակների:

Կրթություն և ուսուցում իրականացնողների համար այն առաջարկում է հնարավորություն՝

- մշակելու համապատասխան ուսումնական ծրագիր և ծրագրեր տարբեր կրթական ոճերի և կարիքների համար,
- առաջարկելու ազգայնորեն ճանաչված ծրագրեր և որակավորումներ,
- զարգացնելու աշխատանքային հարաբերությունները արդյունաբերության հետ,
- ստեղծել ուղիներ մի ծրագրից մյուսը:

2.3. Որակավորումների ներառման հիմքեր

Որակավորումների շրջանակի հիմնական առանձնահատկությունն այն է, որ բոլոր որակավորումները այժմ հիմնված են սահմանված և ընդունված ազգային չափորոշիչների վրա: Չափորոշիչների մշակումը մի հսկայածավալ նախաձեռնություն էր, որը ներառեց արդյունաբերության, դպրոցների, բարձրագույն կրթություն իրականացնողների և կառավարական գործակալությունների հետ մեծ համագործակցություն և խորհրդակցություն: Գիտելիքի և հմտությունների յուրաքանչյուր ոլորտի համար կատարվել է հմտությունների վերլուծություն, մշակվել է չափորոշիչը և փաթեթային ձևով ներկայացվել որպես որակավորում: Այս նախագծման և խորհրդակցական գործընթացը, չնայած որ բավականին դժվարին էր, սակայն ապահովեց, որ մշակված չափորոշիչներն ու որակավորումները համապատասխանեն յուրաքանչյուր արդյունաբերության կամ գիտելիքի յուրաքանչյուր ոլորտի պահանջներին:

Մոտ 10 տարի առաջ Նոր Զելանդիայի որակավորումների շրջանակը սովորողների համար մի խառնաշփոթի աղբյուր էր: Տեղական որակավորումները սովորաբար անփոխանցելի էին արդյունաբերության կամ ինստիտուտների միջև, շատ քիչ համապատասխանություն կար որակավորումների անվանումների մեջ և մի քանի ոլորտներ ուղղակի ճանապարհ չունեին պաշտոնապես ճանաչելու մարդկանց հմտությունները: Շրջանակի չափորոշիչների և որակավորումների ներդրումը սովորողներին տվեց ազգային ճանաչում իրենց ձեռք բերած որակավորումների համար, որոնք և իրականում դարձան փոխադրելի:

Բոլոր որակավորումները, որ ներկայումս գրանցված են շրջանակում, կազմված են արտոնագրված միավոր չափորոշիչներից և բացատրական մասից, որը նկարագրում է, թե սովորողներն ինչ գիտեն և ինչ կարող են անել: Քանի որ չափորոշիչները ազգայնորեն համաձայնեցված են, սովորողների նվաճումները/հաջողությունները կարող են ճանաչվել մի քանի համատեքստում: Նրանց գիտելիքն ու հմտությունները որակավորումների և իրականացնողների միջև փոխադրելի կլինեն:

Չափորոշիչները հստակ սահմանում են ուսման արդյունքները: Արդյունքների վրա հիմնված որակավորումները հենց այն է, ինչը շրջանակի որակավորումները տարբերակում է մյուս որակավորումների համակարգերից (որոնք ավելի շատ կենտրոնանում են ելքային նյութի վրա, ինչպիսին են դասընթացները կամ մուտքային նյութի վրա, ինչպիսին են ուսումնական պլանը կամ ուսուցման ժամերը):

Արդյունքների մոդելները խորհուրդ են տրվել կրթության ֆինանսավորման համակարգերում ներգրավված միջազգային մարմինների կողմից (օր. Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ և ՏՀԶԿ/OECD):

Շրջանակը հիմնվում է կոնսենսուսային գործընթացի վրա: Չափորոշիչները մշակվում են փորձագիտակն խմբերի կողմից (ինժեներական չափորոշիչների համար՝ ինժեներներ, աշխարհագրության համար՝ աշխարհագրագետներ և այլն): Չափորոշիչների նախագծերը հետագայում շրջանառվում են շահառուների շրջանում՝ դիտողությունների և առաջարկությունների համար: Չափորոշիչների վերաբերյալ համաձայնության գալուց և գրանք հաստատելուց հետո շահառուներն ու փորձագետները կանոնավոր կերպով դրանք վերանայում են: Սա թույլ է տալիս, որ չափորոշիչները վերամշակվեն և թարմացվեն ժամանակի ընթացքում:

Յուրաքանչյուր միավոր չափորոշիչ ունի սահմանված կրեդիտային արժեք և շրջանակում համընկնում է որոշակի մակարդակի հետ:

Կրեդիտները կարող են կուտակվել տարբեր ուսումնական հաստատություններից կամ աշխատավայրերից մեկ որակավորման համար: Բոլոր կազմակերպությունները, որոնք հավատարմագրված են գնահատելու չափորոշիչներով, ճանաչում են մյուսների կողմից շնորհված շրջանակային կրեդիտները:

2.4.Մակարդակներ

Մակարդակի որակավորում

Հետավարտական աստիճաններ

Մակարդակ	
10	Դոկորներ
9	Մագիստրոսի աստիճաններ

Աստիճաններ

8	Հետավարտյան աստիճաններ/դիպլոմներ ժատվավոր աստիճաններ
7	Նախնական, առաջին կարգի աստիճան (Բակալավր)

Ազգային դիպլոմներ

6	Տեխնիկ/պարամասնագետ
5	

Ազգային վկայականներ

4	Հմուտ արհեստագործ/մասնագետ
3	Կիսահմուտ արհեստագործ/մասնագետ
2	Ներածական արհեստագործ/մասնագետ
1	Հիմնական ներածական արհեստա-գործ/մասնագետ

Շրջանակն ունի 10 աստիճան/մակարդակ: Առաջին աստիճանը սկսնակ փուլի կրթություն և ուսուցումն է, մոտավորապես համեմատելի 11-րդ տարվա ուսուցմանը: Մեկից չորրորդ աստիճանները ազգային հղման մակարդակներն են: Հինգից յոթերորդը ազգային դիպլոմի մակարդակն են և ութերորդ աստիճանը բարձրագույն վկայականներն են կամ դիպլոմները:

Այնուամենայնիվ, 2002-ից շրջանակում ներ է դրվում նոր որակավորում, որը կոչվում է կրթական նվաճումների ազգային վկայական (NCEA). Սա ստեղծվում է՝ դառնալու ազգային որակավորում բոլոր 11-րդ դասարանի աշակերտների համար: NCEA-ի առաջին աստիճանը 2002-ին փոխարինեց ընթացիկ դպրոցական վկայականին: 2003-ին NCEA երկրորդ աստիճանը փոխարինեց վեցերորդ դասարանում տրվող վկայականին, իսկ 2004-ին NCEA-ի երրորդ աստիճանը փոխարինեց համալսարանական կրթաթոշակի քննությանը:

NCEA-ը կօգտագործի ֆիքսված չափորոշիչները՝ ցույց տալու, թե ինչ գիտեն ուսանողները և ինչ կարող են անել: Յուրաքանչյուր չափորոշիչ արժե կրեդիտների մի ֆիքսված թիվ: Սովորողները կրեդիտներ կհավաքեն, երբ նրանք բավարարեն տվյալ կրեդիտի համար սահմանված չափորոշչի պահանջները: Կրեդիտները նման են որակավորմանը տանող կետերի: Երբ սովորողներն ունեն ընդհանուր 80 կրեդիտ, ապա նրանք սատնում են կրթական նվաճման/առաջադիմության ազգային վկայական: Այն ուսանողները, ովքեր ներառվում են որակավորումների շրջանակի մեջ, ամեն տարի կստանան իրենց առաջընթացի մասին թարմացված տեղեկություններ, որի համար նրանք կրեդիտ են վաստակել: Ուսանողներին նաև կտրվեն հատուկ անհատական ինքնության համարներ (PIN կոդեր), որոնք հնարավորություն կտան նրանց մուտք գործել ինտերներնետում իրենց գնահատականների էջը և տպել դրանց օրինակները:

2.5. Շահառուներ

Նոր Զելանդիայի որակավորումների լիազոր մարմինը ղեկավարում է շրջանակը, իրականացնում է սովորողների և ուսուցում իրականացնողների գրանցումը, և այդպիսով մատուցում է որակի ապահովման ծառայություններ որակավորումների համար՝ պահպանելով որակավորումների հավատարմագրման գործընթացի իրականացումը: Հաստատված որակավորումների ցանկը որակը ապահովված որակավորումների ազգային ռեգիստրն է և նպատակ ունի ցույց տալու որակավորումների միջև կապը և կրեդիտների փոխանցումը դարձնելու ավելի հեշտ կառավարելի սովորողների և ուսուցում իրականացնողների համար:

Կրթություն/ուսուցում իրականացնողները ևս շրջանակի կարևոր մասնիկ են: Իրականացնողը կարող է լինել ցանկացած առանցին կազմակերպություն, որը մատուցում է կրթական և/կամ ուսուցման և/կամ գնահատման ծառայություններ:

Բոլոր կրթություն/ուսուցում իրականացնողները պետք է լինեն հավատարմագրված՝ գնահատելու կրեդիտի շնորհումը ազգային որակավորումների շրջանակի որակավորումների համար: Մինչև հավատարմագրման դիմելը մասնավոր և կառավարական հաստատությունները պետք է գրանցված լինեն որակավորումների մարմիններում:

Կրթություն/ուսուցում իրականացնողները ներառում են դպրոցները, պոլիտեխնիկները, համալսարանները, *վանագաները* (wananga), և մասնավոր ու պետական ուսումնական հաստատությունները:

Կրթություն/ուսուցում իրականացնողները կարող են միայն հավատարմագրվել ԱՈՇ-ում, եթե նրանք բավարարում են որակի վերաբերյալ պահանջները՝ ապացուցելով, որ ունեն ուսուցանողներ, ռեսուրսներ և սարքավորումներ՝ իրականացնելու իրենց ծրագրերը:

Արդյունաբերության կրթական կազմակերպությունները (ITOs) մշակում են չափորոշիչներ և ազգային որակավորումներ հատուկ արդյունաբերական ճյուղերի և մասնագիտությունների համար: Նրանք պատասխանատու են շրջանակի չափորոշիչների գրեթե կեսի համար:

Գործատուների համար որակավորումները ծառայում են որպես երաշխիք իրենց աշխատողների կարողությունների վերաբերյալ: Քանի որ շատ որակավորումներ մշակվում են արդյունաբերության կողմից արդյունաբերության համար, գործատուները կարող են չափորոշիչների մշակման գործում ներդրում ունենալ:

Սովորողները հսկայական շահ ունեն որակավորումների շրջանակի հաջողությունից: Նրանք պետք է գրանցվեն և աշխատեն հասնելու շրջանակի որակավորումներին:

3. Իռլանդիա

3.1. Շրջանակի տրամագիր

Իռլանդիայում վերջերս ուժի մեջ է մտել մի օրինագիծ, որը կարգավորում է ազգային որակավորումների շրջանակի գործունեությունը:

Տրամագիրը պատկերում է որակավորումների կարգերի գնահատումը, որոնք գոյություն ունեին օրենսդրական ակտի ստեղծումից առաջ և ցույց է տալիս դրանց մոտավոր հարաբերություններն իրար նկատմամբ, որոնք հակված են փոփոխվելու:

Աղյուսակ 7: Շրջանակի տրամագիր

Հղման մակարդակ	Մակարդակ
Աստիճան/հետբուհական	5
Ազգային դիպլոմ	4
Ազգային վկայական Ավարտական վկայական Ավարտական վկայականի համար դիմած Ազգային մասնագիտական վկայական – մակարդակ 2 Ազգային արհեստագործական վկայական Ավագ արհեստագործական/մասնագիտական վկայական	3
Հետավարտական վկայականի կուրսի երկրորդական վկայական Ազգային մասնագիտական վկայական – մակարդակ 1	2
Ազգային հիմնական/հիմքային վկայական	1

3.2. Ի՞նչ է որակավորումների շրջանակը/համակարգը

Ազգային որակավորումների շրջանակը դեռևս մշակման փուլում է: Որակավորումները (1999-ի կրթության և ուսուցման ակտ) հնարավորություն տվեց ստեղծելու Իռլանդիայի ազգային որակավորումների լիազոր մարմինը (NQAI), որը հիմնադրվեց 2001թ-ի փետրվարին: Լիազոր մարմնի պարտավորությունը կլինի ստեղծել, վերահսկել և պահպանել շրջանակը:

3.4. Հիմնավորումն ու հիմնական նպատակները

Որակավորումների (կրթություն և ուսուցում) ակտի և ազգային շրջանակի մշակման հիմնական նպատակներն են՝

- ստեղծել և զարգացնել գիտելիքի, հմտության և կարողության չափորոշիչներ,
- բարձրացնել հետագա կրթության և ուսուցման և բարձրագույն կրթության և ուսուցման որակը,
- սահմանել կրթության և ուսուցման շնորհված որակավորումների համակարգման և համեմատության համակարգ,
- օժանդակել և պահպանել մատչելիության, փոխանցելիության և առաջընթացի գործընթացները:

Ակտի վստահելիության և նպատակի առումով անհատ ուսանողն ունի կենտրոնական դեր: Ակտի մեջ տրված է ուսանողի շատ լայն սահմանում և սա օրենսդրության ամենակարևոր կողմերից մեկն է: Սովորողը կարող է լինել ցանկացած մարդ, ով ներգրավված է կրթական կամ ուսուցման հաստատություններում, կամ այլուր, որը կարող է նկարագրվել որպես կրթության ֆորմալ իրավիճակ: Ավելին, սովորողն այն մարդն է, ով ձեռք է բերում կամ արդեն ձեռք է բերել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ անկախ դրա իրականացման ձևից, տեղից և ժամանակից: Սովորողներն, այդուհանդերձ, կարող են լինել կրթական հաստատությունների ուսանողներ, աշխատավայրի աշխատողներ, համայնքային միջոցառումնաերի մասնակիցներ կամ անկախ ուսուցանվողներ/ինքնուսույցներ:

Իռլանդիայի ազգային որակավորումների լիազոր մարմինը ներկայումս սկսում է որակավորումների ազգային շրջանակի մշակման մասին հուշագրի պատրաստումը, որը հետագայում կներկայացվի ազգային և միջազգային քննարկումների: Ակնկալվում է, որ փաստաթուղթը կվերաբերվի քաղաքականությունների և չափանիշների բնույթին, որոնց վրա պետք է հիմնվի շրջանակը, ինչպես նաև՝ թե ինչ քայլեր են անհրաժեշտ ձեռնարկել շրջանակը մշակելիս, ինչ բնույթի պետք է լինի շրջանակը և թե ինչպես այն պետք է գործի: Հետագայի համար պլանավորվում է, որ փաստաթուղթը կանդրադառնա նաև մատչելիության, փոխանցելիության և առաջընթացին վերաբերվող ընթացակարգերին և դրանց գործունեության ձևին, որոնք պետք է որոշի լիազոր մարմինը: Հույս կա, որ փաստաթուղթը կհրապարակվի մինչև տարվա վերջ: Հետագա քննարկումներից և խորհրդակցություններից հետո լիազոր մարմինը նպատակ ունի մշակելու արդեն ինքնին որակավորումների շրջանակը:

3.5. Որակավորումների ներառման հիմքեր

Ազգային որակավորումների լիազոր մարմինը կաշխատի նոր որակավորումների շնորհման խորհուրդների հետ, որոնք ստեղծվել են 2001-ի հունիսին (հետագայում՝ կրթության և ուսուցման որակավորումների շնորհման խորհուրդ և բարձրագույն կրթության և ուսուցման որակավորումների շնորհման խորհուրդ).

Այս նոր խորհուրդները ազգային որակավորումների շնորհումը կդարձնեն հասանելի ամբողջ երկրի կրթության և ուսուցման համակարգի համար, բացի նրանցից, որոնք արդեն տրվում են

տարրական և հետտարրական ոլորտներում, Դուբլինի տեխնոլոգիայի ինստիտուտի և համալսարանների կողմից:

Ի լրումն, ակտը հնարավորություն է տալիս լիազորության պատվիրակման բարձրագույն կրթության և ուսուցման որակավորումներ շնորհելու տեխնոլոգիական այլ ինստիտուտների և հետագա որակավորումներ շնորհելու FAS-ին, CERT-ին and Teagasc-ին (պետական ուսուցում իրականացնողներ ընդհանուր արդյունաբերության ոլորտում, տուրիզմի և գյուղատնտեսության ոլորտներում համապատասխանաբար):

Ցանկացած կրթություն և ուսուցում իրականացնող, անկախ իրականացման աղբյուրից՝ կրթական ինստիտուտ, աշխատավայր, համայնք, կկարողանա դիմել երկու նոր խորհուրդներից մեկին ծրագրի վավերացման համար: 1999-ի ակտի 8(2)(գ) բաժինը սահմանում է.

«… հետագա կրթության և ուսուցման որակավորումների շնորհման և բարձրագույն կրթության և ուսուցման որակավորումների շնորհման խորհուրդների հետ խորհրդակցելով պետք է ստեղծեն իրենց գործառույթների իրականացման ընթացակարգեր և պետք է դրանք ժամանակ առ ժամանակ վերանայեն …»

Լիազոր մարմնում պահանջ էր առաջացել, նորաստողծ խորհուրդների համար մշակելու նրանց գործառույթների ընթացակարգեր: Երկու խորհուրդներից ստացած կարծիքներից հետո լիազոր մարմնի ստեղծած ընթացակարգերը թույլ տվեցին սահմանելու անցումային ժամանակաշրջան միչև 2001-ի դեկտեմբերի վերջը, իսկ մինչ այդ նոր որակավորումներ շնորհող խրհուրդները օգտագործել են մինչ այդ գոյություն ունեցող գործընթացները:

3.6. Որակի ապահովում

1999-ի ակտը նաև պարունակում է որակի ապահովման ընթացակարգեր կրթություն և ուսուցում իրականացնող ցանկացած կազմակերպության համար, ում ծրագրերը վավերացվել են երկու խորհուրդներից որևէ մեկի կողմից կամ դրանք լիազորվել են տվյալ խորհուրդների կողմից՝ ինքնուրույն շնորհելու որակավորումները:

Նոր որակի ապահովման ընթացակարգերը պետք է համաձայնեցվեն համապատասխան խորհրդի և իրականացնողի միջև: Նրանք պետք է ներառեն ազգային և միջազգային փորձագետների կողմից կանոնավոր գնահատում, ինչպես նաև սովորողների կողմից գնահատում: Իրականացնողը պարտավոր է կատարելու որակավորում շնորհող խորհրդի ընդունած ընթացակարգերի կիրառումից բխող ցանկացած որոշում: Խորհուրդը պետք է կանոնավոր կերպով վերանայի ընթացակարգերի արդյունավետությունը:

Նմանատիպ կարգերը կիրառելի են Դուբլինի տեխնոլոգիաների ինստիտուտի պարագայում, բացի նրանից, որ Իռլանդիայի ազգային որակավորումների լիազոր մարմինն ունի որակավորում շնորհող խորհուրդների վերահսկողության դեր:

3.7. Հիմնական ուղիները

1999-ի ակտը սահմանում է, որ հետագայում բոլոր կրթություն և ուսուցում իրականացնողները կուրսը սկսելուն պես պարտավոր են սովորողներին տեղեկացնելու նրանց համար առկա

տեղափոխության և առաջընթացի/աճի բոլոր ուղիների մասին: Այս ուղիները նախատեսված են ապահովելու թափանցիկ և ընդգրկուն ցանց, որը կօգնի սովորողներին որոշում կայացնելու իրենց հետագա կարիերայի վերաբերյալ: Սա նաև երաշխիք է սովորողների համար՝ վստահ լինելու իրենց ընտրած ծրագրերի որակի հարցում:

3.8. Շահառուներ

Լիազոր մարմինը կաշխատի նոր որակավորում շնորհող խորհուրդների, համալսարանների, Դուբլինի տեխնոլոգիական ինստիտուտի, ինչպես նաև գոյություն ունեցող կրթություն և ուսուցում իրականացնողների, սովորողների և սոցիալական գործընկերների հետ: Ինչպես վերևում նշվեց, լիազոր մարմինը նաև պատրաստում է հուշագիր շրջանակի մասին, որը կքննարկվի ազգային և միջազգային մասշտաբներով:

4. Շոտլանդիա

4.1. Շրջանակը. Տրամագիր

Կրեդիտների և որակավորումների շոտլանդական շրջանակը ստեղծվել է՝ մեկ շրջանակում միավորելով շոտլանդական բոլոր հիմնական որակավորումները՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակավորումները, SQA-ի (շոտլանդական որակավորումների լիազոր մարմին/ՇՈԼՄ) ազգային և բարձրագույն որակավորումները և SVQ[1]-ները. Գոյություն ունեն12 մակարդակներ սկսած 1-ից (ազգային որակավորումներ) շոտլանդական կրեդիտների և որակավորումների շրջանակի/ՇԿՈՇ(SCQF) 1-ին մակարդակից մինչև դոկտորական աստիճանը SCQF-ի 12-րդ մակարդակում:

Աղյուսակ 8: Շոտլանդական կրեդիտների և որակավորումների շրջանակը

ՇԿՈՇ մակարդակ	ՇՈԼՄ ազգային միավորներ, **դասընթացներ և խմբային որակավորումների շնորհում Բարձրագույն կրթություն SVQ***	ՇԿՈՇ մակարդակ
12	Դոկտորական	12
11	Մագիստրոս SVQ5	11
10		10
	Պատվավոր աստիճան Շրջանավարտ Դիպլոմ/վկայական	
9		9
	Շարքային աստիճան Շրջանավարտ	

[1] Շոտլանդիայի մասնագիտական որակավորումներ

8	Դիպլոմ/վկայական	8
	Բարձրագույն ազգային դիպլոմ SVQ 4	7
7	Բուհական դիպլոմ	
	Առաջավոր բարձրագույն Բարձրագույն ազգային վկայական	6
	Բուհական վկայական	5
6	Բարձրագույն SVQ 3 Միջին 2 SVQ 2	4
5	Կրեդիտային ստանդարտ կարգ	
		3
	Միջին 1 SVQ 1	
4	Ընդհանուր ստանդարտ կարգ	2
		1
	Մուտք 3	
	Հիմքային ստանդարտ կարգ	
3	Մուտք 2	
	Մուտք 1	
2		
1		

4.2. Ի՞նչ է որակավորումների շրջանակը

Շոտլանդական կրեդիտների և որակավորումների շրջանակը միասնական ինտեգրված շրջանակ է, որը ներառում է շոտլանդական ԲՈՒՀ-երի կողմից շնորհվող որակավորումներն, ինչպես նաև նրանք, որոնք շնորհվում և հավատարմագրվում են շոտլանդական որակավորումների լիազոր մարմնի կողմից: Այն մշակվել է բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալության (շոտլանդական գրասենյակի), Շոտլանդիայի համալսարանների և շոտլանդական որակավորումների լիազոր մարմնի համատեղ ուժերով: ՇՈԼՄ-ի ազգային որակավորումները առկա են եղել Շոտլանդիայի դպրոցներում և քոլեջներում սկսած 1999-ից՝ հետ-16 որակավորումների վերանայումից հետո: Հին SCE բարձրագույնը/ավագը հանվել է և փոխարինվել նորով: Վեցերորդ դասարանի վկայականը այժմ ևս փոխարինվել է բոլորովին նոր որակավորմամբ՝ առաջադեմ բարձրագույն/ավագ: Նոր բարձրագույն/ավագ որակավորումն ունի նույն արժեքը, որն ուներ նախորդը, այսինքն այն կարող է օգտագործվել համալսարան ընդունվելիս, ուսուցման դասընթացի հաշախելու համար կամ աշխատանք փնտրելու համար:

4.3. Շոտլանդական խմբային որակավորումների շնորհում

Այս դասընթացներն ու միավորները կարող են վերածվել շոտլանդական խմբային որակավորումների շնորհման/ ՇԽՈՇ (SGAs). Խրանք ավելի ծավալուն որակավորումներ են, որոնց

համար ավելի երկար ժամանակ է հարկավոր և որոնք կարող են դիտվել ավելի շատ որպես բարձրագույն ազգային վկայականներ (HNCs) և բարձրագույն ազգային դիպլոմներ (HNDs):
Ուսանողները կարող են վերցնել չորսից հինգ առարկա՝ աշխատելու ՇԽՈՇ-ի ուղղությամբ՝ կախված սահմանված կանոններից: Այս խմբային շնորհումները օգտակար են նրանց համար, ովքեր վերադառնում են կրթություն. միավորային ձևաչափը նշանակում է, որ սովորողները կարող են աշխատել իրենց ուզած տեմպով: Կրեդիտներ կարող են տեղափոխվել նաև ՇՈԼՄ-ի այլ դասընթացներից, ինչպիսիք են SVQ-ների ստանդարտ աստիճանները/կարգերը:

Շրջանակի մյուս անբաժան մասերը ծածկում են SVQ-ները և շոտլանդական բուհերի կողմից շնորհվող բոլոր որակավորումները:

4.4. Հիմնավորումը և հիմնական նպատակները

ՇԿՈՇ-ի հիմնական նպատակն է ներառել ներկայումս շրջանակից դուրս գտնվող կրթության և որակավորումների ծրագրերը, որոնք ենթական են վավերական, հուսալի և որակի առումով ապահով գնահատման:

Դրա համար անհրաժեշտ չափանիշներն ու գործընթացները ներկայումս մշակման փուլում են: Այնուամենայնիվ, ցանկացած տիպի ուսուցում, անկախ նրանից այն պաշտոնապես գնահատված է, թե՝ ոչ, պետք է շրջանակում տեղադրվի համապատասխան մակարդակի վրա: Սա բազմաթիվ համայնքային ուսուցման ծրագրերի համար դիտվում է որպես կարևոր զարգացում:

Այս զարգացումները նպաստում են շրջանակի տեսլականին, որ այն մի գործիք է՝ մեծացնելու ուսուցման բոլոր մակարդակներում և բոլոր ձևերում մասնակցությունը:

4.5. Հիմնական ուղիները

ՇԿՈՇ-ի սահմաններում կրեդիտները սահմանվում են Scotcat-ի միավորների առումով. այս միավորները բաշխվում են ուսման արդյունքների վրա, որոնք ենթական են վավերական և հուսալի գնահատման մեթոդների: Scotcat միավորները հիմնված են այն ժամանաքանակի վրա, որը, ակնկալվում է, որ «միջին» սովորողը կոնկրետ մակարդակում կծախսի՝ հասնելու ուսումնական արդյունքների: Սա հիմնված է շոտլանդական բուհերում կիրառվող Scotcat համակարգի վրա: Այդ միավորները կարող են դիտվել որպես ուսման արդյունքների գործողության ժամկետ:

Մեկ միավոր է հատկացվում յուրաքանչյուր 10 ժամ պահանջված տեսական ուսուցման համար, չնայած, որ սովորողները ո՛չ կորցնում են և ո՛չ էլ վաստակում լրացուցիչ միավորներ, եթե ծախսում են ավելի քիչ/ավելի շատ ժամանակ արդյունքի հասնելու համար: Շոտլանդիայում հիմնական որակավորումներից շատերը մշակվել են կրեդիտների հիմքի վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր որակավորմանը կից ընդհանուր կրեդիտների քանակի և մակարդակի վերաբերյալ կառուցվածքային կանոնները: Օրինակ, գերազանցության աստիճանը պահանում է 480 Scotcat միավորների կուտակում, որոնցից առնվազն 90-ը պետք է լինեն 10-րդ մակարդակի, մինչդեռ ՇՈԼՄ-ի բարձրագույն/ավագ կուրսը պահանջում է 24 Scotcat միավոր 6-րդ մակարդակում: Ներակայումս աշխատանքներ են տարվում շոտլանդական NTO-ների և անհատական NTO-ների հետ՝ SVQ-ները հնարավորինս լիովին համակարգում ներգրավելու համար:

Ընդհանուր Scotcat միավորները կարող են օգտագործվել՝ օգնելու սովորողներին փոխադրվելու մի ծրագրից մյուսը: Որակավորում շնորհող մարմինները՝ ՇՈԼՄ-ը և համալսարանները, կշարունակեն որոշելու, թե ինչքանով է այս տիպի փոխադրումները հնարավոր: Նրանք որոշում են կոնկրետ կրեդիտային միավորների քանակը, որ կարող է տրվել նախորդ կրթության և որակավորումների համար և այդպիսով հնարավոր են դարձնում կրեդիտների փոխանցումը հաստատությունների միջև, դրանց ներսում և կրթության ու ուսուցման ոլորտներում:

4.6. Մակարդակներ

Այս շրջանակում կա 12 մակարդակ `սկսած տարրական կրթության ապահովումից մինչև դոկտորական աստիճանը: Մեկ մակարդակը կարող է պարունակել մեկ կամ մի քանի որակավորումներ: Մակարդակները մշակվել են ուսանողներին խրոխուսելու անցնել հաջորդ մակարդակ տարբեր ձևերով, այնպես որ նրանք կարողանան իրենց բոլոր հնարավորություններն օգտագործել: Օրինակ, հինգերորդ մակարդակը ցույց է տալիս տարբեր որակավորումներ, յուրաքանչյուրը առաջընթացի տարբեր ճանապարհներով դպրոցի, ֆորմալ կրթության կամ աշխատավայրի սովորողների համար: Շրջանակն օգտագործում է համաձայնեցված ընդհանուր մակարդակի բնութագրիչներ՝ թույլ տալով լայնածավալ համեմատություններ որակի ապահովման գնահատում անցած ուսումնական արդյունքների միջև: Այս բնութագրիչները յուրաքանչյուր մակարդակի պարտադիր ուսուցման նկարագրեր չեն, սակայն կարող են օգտագործվել որպես հիմնակետ/կողմնորոշիչ, երբ՝

- տրվում է ուղղորդում/տեղեկատվություն ուսումնական հնարավորությունների/ ուսուցման իրականացման մասին,
- որոշվում է որակավորման կամ կրթական ծրագրի մակարդակը շրջանակում,
- գնահատվում է նախկին կրթությունը,
- մշակվում է կրթական ծրագիր:

5. Հարավային Աֆրիկա

Աղյուսակ 9: Շրջանակի տրամագիր

ԱՈՇ-ի մակարդակ	Ոլորտ	Որակավորման տեսակ
8 7 6 5	Բարձրագույն կրթություն և ուսուցում	• Հետ-դոկտորական հետազոտական աստիճաններ • Դոկտորական • ՄԱգիստոսի աստիճաններ • Մասնագիտական որակավորումներ •Գերազանցության/պատվավոր աստիճաններ

		• Ազգային առաջին աստիճաններ • Բարձրագույն դիպլոմներ • Ազգային դիպլոմներ • Ազգային վկայականներ
Հետագա կրթության և ուսուցման վկայական		
4 3 2	Հետագա կրթություն և ուսուցում	Ազգային վկայականներ
Ընդհանուր կրթության և ուսուցման վկայական		
1	Ընդհանուր կրթություն և ուսուցում	9-րդ աստիճան | ABET (մեծահասակների հիմնական կրթություն և ուսուցում) մակարդակ 4 Ազգային վկայականներ

5.1. Ի՞նչ է որակավորումների շրջանակը

Դա մի շրջանակ է, այսինքն դնում է սահմաններ, և սկզբունքների և ուղենիշների մի հավաքածու է, որը սահմանում է տեսլական, փիլիսոփայական հիմք և կազմակերպական կառուցվածք, այս դեպքում որակավորումների համակարգ կառուցելու համար: Մանրամասն մշակումն ու իրականացումը կատարվում են այս սահմանների շրջանակում: Դա ազգային է, որովհետև ազգային ռեսուրս է և իրենից ներկայացնում է կրթությունը և ուսուցումը ճանաչված որակավորումները մեկ միասնական կառուցվածքումում ինտեգրելու ազգային նախաձեռնություն: Դա որակավորումների շրջանակ է, այսինքն սովորողի առաջադիմության արձանագրում:

Կարճ ասած, ազգային որակավորումների շրջանակը սկզբունքների և ուղենիշերի մի համակարգ է, որով սովորողի առաջադիմությունը գրանցվում է՝ հնարավորություն տալու ձեռք բերված հմտություններն ու գիտելիքը ազգայնորեն ճանաչելու՝ այդպիսով ապահովելով ինտեգրացված համակարգ, որը խրախուսում է ողջ կյանքի ընթացքում ուսուցումը:

5.2. Հիմնավորումը և հիմնական նպատակները

5.2.1. Նպատակները

ԱՈՇ-ի նպատակները, որոնք նկարագրված են Հարավային Աֆրիկայի որակավորումների լիազոր մարմնի մասին (SAQA) ակտում, հետևյալն են.

- ստեղծել ուսումնական առաջադիմության ինտեգրված ազգային շրջանակ,
- նպաստել կրթության, ուսուցման և կարիերայի ուղիների մատչելիությանը, դրանց շարժունակությանը և առաջընթացին,
- բարձրացնել կրթության և ուսուցման որակը,

- արագացնել անցյալում տեղի ունեցած կրթության, ուսուցման և աշխատանքի հնարավորությունների անարդար դիսկրիմինացիայի ուղղումը,
- նպաստել յուրաքանչյուր սովորողի ամբողջական անհատական զարգացմանը, ինչպես նաև ամբողջ երկրի սոցիալական և տնտեսական զարգացմանը:

5.2.2. Հիմնավորում

1994-ն միջազգային հանրությունը ականատես եղավ նոր դեմոկրատիայի ծննդին և ողջունեց նոր Հարավային Աֆրիկային՝ որպես իր գլոբալ գյուղի ամենանոր անդամի: Այդ պատիվն ընդունելով՝ այս երկիրը ընդունեց նաև այդ դիրքի հետ կապված մարտահրավերները:

Աշխարհի շատ երկրներ փնտրում են ավելի լավ ճանապարհներ՝ կրթելու իրենց մարդկանց և կազմակերպելու իրենց կրթության և ուսուցման համակարգն այնպես, որ նրանք կարողանան ավելի ու ավելի մրցունակ դարձող գլոբալ տնտեսական միջավայրում գտնել իրենց տեղը: Ավելին, աշխարհը քաղաքականապես, աշխարհագրորեն և տեխնոլոգիապես անընդհատ փոոխվող վայր է: Անխոս, քսաներորդ դարի տեխնոլոգիական արագ փոփոխությունները կրթական համակարգերին դրեցին ահավոր ճնշման տակ, քանի որ վերջիններս փորձում են հարմարվել ու ներառել այս փոփոխությունները՝ պատրաստելու ավելի ստեղծագործ, արդյունավետ և հարմարվող մարդկանց: Նման աշխարհում հաջողություն ունենալը, կամ նույնիսկ գոյատևելը պահանջում է, որ Հարավային Աֆրիկան ունենա ազգային կրթական և ուսուցման համակարգ, որն ապահովում է որակյալ կրթություն, արձագանքում է արտաքին միջավայրի անընդհատ փոփոխվող ազդեցություններին և նպաստում է այն ազգի զարգացմանը, որը հանձն է առել կրթություն ողջ կյանքի ընթացքում գործընթացը:

Երբ սովորողները գիտեն, որ գոյություն ունեն հստակ ուսուցման ուղիներ, որոնք ապահովում են կրթության, ուսուցման և կարիերայի մատչելիություն, շարժունակություն և առաջընթաց, նրանք ավելի հակված են զարգացնելու իրենց հմտություններն ու գիտելիքը, քանի որ դա ավելացնում է աշխատանքի հնարավորությունները: Աշխատուժի զարգացած հմտություններն ունեն ավելի լայն նշանակություն, մասնավորապես՝ ազգի գործառնական և ինտելեկտուալ ներուժի զարգացում՝ այդպիսով ավելացնելով մեր հնարավորությունները հաջողության հասնելու գլոբալ հանրության մեջ:

5.2.3. Որակավորումների ներառման հիմքեր

Ազգային չափորոշիչների մարմնի (ԱՉՄ/NSB) կանոնները նշում են, որ որակավորումը պետք է՝

- ներկայացնի ուսումնական արդյունքների պլանավորված համակցություն, որն ունի սահմանված նպատակ և որը մտադրված է որակավորվող սովորողներին տալու կիրառելի կարողություններ և հիմք հետագա ուսումնառության համար,
- ավելացնի արժեք որակավորվող սովորողի համար՝ տալով կարգավիճակ, ճանաչում, և ավելացնելով շուկայի համար նրա պիտանելիությունն ու աշխատունակությունը,
- ապահովի հասարակության և տնտեսության համար օգուտներ,
- համապատասխանի ԱՈՇ-ի նպատակների հետ,
- ներառի առանձնահատուկ և խիստ կարևոր խաչվող ոլորտային արդյունքներ, որոնք նպաստում են ողջ կյանքի ընթացքում կրթությանը,

- լինի միջազգայնորեն համեմատելի, որտեղ որ կիրառելի է,
- համապատասխանաբար ներառի ինտեգրված գնահատում՝ երաշխավորելու, որ որակավորման նպատակը ի կատար է ածվել: Գնահատումը պետք է ներառի մի շարք ձևաչափային և ամփոփող գնահատման մեթոդներ, ինչպիսին են փաթեթները, մոդելավորումը/սիմուլյացիան, աշխատավայրի գնահատումները և նաև գրավոր ու բանավոր քննությունները,
- որակավորման շնորհման կանոններում նշել, որ որակավորումը կարելի է ստանալ ամբողջովին կամ մասամբ՝ հիմնվելով նախորդ կրթության վրա, որի գաղափարը ներառում է (սակայն չի սահմանափակում) ուսումնական արդյունքները, որոնք ձեռք են բերվել ֆորմալ, ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթության և աշխատանքային փորձի միջոցով:

Կանոնակարգում կա մի հոդված այն որակավորումների գրանցման մասին, որոնք կառուցված են միավոր չափորոշիչներից, ինչպես նաև ամբողջական որակավորումների գրանցման մասին, որոնք կառուցված չեն միավոր չափորոշիչներից: Միավոր չափորոշիչ նշանակում է կրթական և ուսուցման ցանկալի արդյունքների ընդունված ձևակերպումներ և նրանց առնչվող գնահատման չափանիշներ՝ վարչական և այլ տեղեկատվության հետ միասին, ինչպես նշված է կանոնակարգում: Որակավորման կառուցվածքի երկու ձևաչափն էլ, այնուամենայնիվ, պահանջում են ուսումնական արդյունքների հատկորոշում՝ վերջինիս ձևաչափը պահանջելով ելքային մակարդակի արդյունքների վերարտադրություն և հարակից գնահատման չափանիշներ:

Բավականին քննարկումներ են ընթանում ազգային մակարդակով ուսումնական արդյունքների վերաբերյալ համաձայնության գալու կարողության և ցանկության կապակցությամբ և առավել ևս՝ ուսումնական արդյունքները կիրառելի կարողությունների ստանդարտների ձևով բնութագրելու կապակցությամբ: ՀԱՈԼՄ/SAQA պահանջ է սահմանել, որ միայն այն որակավորումներն ու չափորոշիչները կարող են մասնակցել ազգային համատեղ գործընթացներին, որոնք պետք է հաշվառվեն ազգային որակավորումների շրջանակում. ազգային ճանաչումը պահանջում է ազգային շահառուների կողմից ճանաչում:

Ավելին, որակավորումների և չափորոշիչների մշակողները կարող են ընտրություն կատարել որակավորումների և չափորոշիչների մշակման ընթացքում կոշտ/անփոփոխ ու ճկուն/փոփոխական լինելու միջև՝ դրանով իսկ թույլատրելով ընտրություն, կամ՝ոչ:

ԱՈՇ-ի գործընթացների ուժեղ կողմն այն է, որ ուսումնական ոլորտի բոլոր շահառուների ներկայացուցիչները և ոչ թե նրանցից ընտրված մի քանիսն են ընդունելու այդ որոշումները: Բացի դրանից, վերանայման պահանջված գործընթացների միջոցով բոլոր որակավորումներն ու չափորոշիչները պետք է կանոնավոր կերպով վերանայվեն՝ հավաստելու, որ համաձայնեցված չափանիշներն ու պահանջները իրատեսական են, հիմնավորված և ցանկալի: Եթե համաձայնություն լինի առ այն, որ անհրաժեշտ են փոփոխություններ, ապա կան բավարար հնարավորություններ այդ փոփոխություններն ընդունելու համար:

Ավելի բարդ հարց է բարձրացվում ուսումնական արդյունքների և կարողությունների չափորոշիչների տեսակետից:

Որոշ մարդիկ հարց են բարձրացնում, որ որոշակի որակավորումների և չափորոշիչների ուսումնական արդյունքները կարող են հարաբերականորեն հեշտությամբ նկարագրվել կարողությունների չափորոշիչների ձևով, օր. ինժեներական որակավորումների նախագիծ չափորոշիչները: Այնուամենայնիվ, մյուս որակավորումների դեպքում դա ավելի դժվար է, քանի որ ուսումնական արդյունքներն ավելի քիչ ակնհայտ են և ավելի քիչ ճշգրիտ: Ազգային համաձայնության գալու ցանկացած փորձ կհանգեցնի ստեղծագործականության և յուրօրինակության կորստի, մինչդեռ հենց դրանք են, որ նրանց արժեք են տալիս: ՀԱՈԼՄ/SAQA այն կարծիքին է, որ ԱՈՇ-ի որակավորման նկարագիրը բարձրացնում է այս հարցը, այսինքն՝ որակավորումը պետք է իրենից ներկայացնի ուսումնական արդյունքների պլանավորված միավորում/համադրում, որն ունի սահմանված նպատակ և որը միտված է որակավորվող սովորողին տալու կիրառելի կարողություններ և հիմք հետագա կրթության համար:

Որակավորման նպատակը նկարագրելիս չափորոշիչներ մշակողները պետք է ուշադրություն դարձնեն, թե որն է որակավորման նպատակը և թե ինչպես է այն նպաստում սովորողի զարգացմանն ու հետագա կրթությանը:

5.3. Մակարդակներ

ՀԱՈԼՄ-ը ընդունել է ութ մակարդակ ուեցող շրջանակ՝ համապատասխանաբար 1 և 8 մակարդակներով, որոնք համարվում են ոչ վերջնական: Մակարդակ 1–ը պարունակում է մեծահասակների հիմնական կրթության և ուսուցման (ABET) երեք վկայականի մակարդակներ, ինչպես նաև ընդհանուր կրթության և ուսուցման վկայական:

6. Շահառուներ

Չափորոշիչների ընդունում Որակի ապահովում



ՀԱՈԼՄ-ի ակտը հստակ սահմանում է, որ ԱՈՇ-ը պետք է ներդրվի բոլոր այն մարմինների ու ինստիտուտների հետ խորհրդակցելու և համագործակցության արդյունքում, որոնք պատասխանատու են ԱՈՇ-ի ազդեցության շրջանակում գտնվող չափորոշիչների համապատասխան կրթության, ուսուցման և որակավորման (certification) համար:

Այն փաստը, որ ՀԱՈԼՄ-ի ակտը հստակորեն խոսում է այն մասին, որ ՀԱՈԼՄ-ը պետք է կատարի այս աշխատանքը խորհրդակցական և համագործակցային հիմունքներով, մատնանշում է նոր դեմոկրատական կառավարությունը հանձն է առել ապահովելու հասարակության բոլոր շահառու կազմակերպությունների և կողմերի ներկայացուցչական և մասնակցային սկզբունքների կիրառումը: Ներառականության այս շեշտադրման արմատները տանում են դեպի հասարակության մեծ հատվածների պատմական բացառում կրթության և ուսուցման ոլորտներում կարևոր որոշումների կայացման գործընթացներից: Օրինակ, անցյալում զարգացվելիք հմտություններն ու կրթական ծրագրերի բովանդակությունը կազմվել են ոլորտի այսպես կոչված փորձագետների կողմից՝ սովորաբար դասընթացները իրականացնելով կրթական ֆորմալ հաստատություններում (այսինքն՝

կրթություն «իրականացնողների» մոտ)՝ շատ քիչ կամ գրեթե չխորհրդակցելով որակավորումների «օգտագործողների» հետ, որոնք են գործարար միավորները, աշխատանքային միավորումները և սովորողները: Սա հանգեցրեց հաճախակի կրկնվող քննադատության առ այն, որ շատ քիչ համապատասխանություն կար կրթության ֆորմալ հաստատությունների սովորացրածի և աշխատանքի շուկայի և հետագա կրթության պահանջների միջև:

Ավելին, կրթության նախկին նախարարությունների և աշխատուժի միջև շատ քիչ համագործակցություն և խորհրդակցում կար՝ ամբողջ արդյունաբերության, կազմակերպությունների և պետության կտրվածքով, ինչպես նաև ֆորմալ կրթություն իրականացնողների և ուսուցում իրականացնողների միջև: Սա նշանակում էր, որ ոչ մի հնարավորություն չկար համարժեքություն մտցնել տարբեր դասընթացների կամ կրթություն իրականացնողների տված գիտելիքների միջև. որակավորումները մնում էին ըստ ոլորտների, ըստ աշխարհագրական դիրքի կամ ըստ հաստատության տեսակի՝ հարակից կրթական ոլորտների միջև շատ քիչ կամ գրեթե առանց ֆորմալ արտահայտման:

Չնայած նոր Հարավային Աֆրիկայում որոշումների կայացման գործում խորհրդակցության ու համագործակցության մշակույթին, կոնկրետ որակավորման ուսումնական արդյունքների վեաբերյալ որոշում կայացնելու հարցում ներկայացուցչականության ամենատրամաբանական պատճառը դրա պատշաճությունն է: Որպեսզի Հարավային Աֆրիկան մնա արձագանքող միջավայրի փոփոխություններին, անհրաժեշտ է, որ կրթությանն առնչվող բոլոր էական/կարևոր կարծիքները լսվեն՝ օրինակ պետական, գիտամանկավարժական, գործարար աշխարհի, աշկատաշուկայի, կրթություն և ուսուցում իրականացնողների: Չափորոշիչների մշակման և որակավորումների կառուցվածքի ներառական մոտեցումը թույլ կտա նոր միտումներն արագ հաշվի առնել՝ դրանով իսկ երաշխավորելով, որ Հարավային Աֆրիկան միջազգային զարգացումների առաջավոր շարքերում է:

ՀԱՈԼՄ-ը հանձն է առել հանրային խորհրդակցության գործընթաց՝ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Որակավորումներն ու չափորոշիչները պետք է անցնեն նեղ քննարկումների գործընթաց ոլորտի շահառուների հետ և լայն քննարկումների գործընթաց, որտեղ լայն հասարակությանը հնարավորություն կտրվի վերանայելու առաջարկվող չափորոշիչները և կարծիքներ ներկայացնելու դրանց մասին: Դրանից հետո բոլոր որակավորումներն ու չափորոշիչները ուղարկվում են այն խմբին, որը բաղկացած է հասարակության հաշմանդամ և մեկուսացած հատվածները ներկայացնող կազմակերպություններից, որպեսզի վերջիններս վերանայեն որակավորումներն ու չափորոշիչները մինչև դրանց ընդունումը՝ վստահանալու որ վերջիններս անարդար խտրականություն չեն դնում հասարակության այս խավերի համար:

Իրենց որակի վերահսկողության գործառույթներն իրականացնելիս կրթության և ուսուցման որակի ապահովման մարմինները/ ETQAs պարտավոր են ապահովել ազգային շահառուների ներկայացուցչականություն: Այս ներկայացուցչականության հիմնական նպատակը հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովումն է: Ի լրումն, ՀԱՈԼՄ-ի քաղաքականության բոլոր փաստաթղթերը կազմվում են համապատասխան շահառուների հետ բաց խորհրդակցական գործընթացի արդյունքում և դեռ նախագիծ վիճակում հրապարակվում են կառավարական թերթում՝ հանրային կարծիքի հավաքագրման նպատակով: ՀԱՈԼՄ-ի կառուցվածքում բոլոր առաջադրումները, բացի ղեկավար անդամներից, տպագրվում են կառավարական թերթում մինչև վերջնական նշանակումները՝ հնարավորություն տալով հանրությանը կարծիք հայտնել դրանց մասին: Ի լրումն,

հանրային կարծիք պահանջող բոլոր փաստաթղթերն ու ՀԱՈԼՄ-ի բոլոր հրապարակումները կառավարական թերթում տեղադրվում են վեբ կայքի վրա (http://www.saqa.org.za): Այս կերպ ՀԱՈԼՄ-ը երաշխավորում է սոցիալական թափանցիկություն և ներառական մոտեցում իր աշխատանքում:

Կրթության և ուսուցման այն համակարգը, որը կառուցված է մասնակցային և բանակցային գործընթացների հիման վրա՝ բավարարելու բոլոր շահառուների պահանջները, վայելում է ավելի մեծ օրինականություն և վստահություն հասարակության մեջ, որտեղ այն գործում է, քան կլիներ հակառակ պարագայում: Ավելին, ՀԱՈԼՄ-ը, Հարավ Աֆրիկյան համակարգի առաջատար մարմինը, անկողմնակալ «վերահսկող է», այսինքն՝ այն ո՛չ պետական դեպարտամենտ է կամ կառավարության թև, ո՛չ գործարար աշխարհի նախաձեռնություն է, ո՛չ աշխատաշուկայի, ո՛չ էլ կապված է կրթություն և ուսուցում իրականացնող ոլորտի հետ: Այս իսկ պատճառով ՀԱՈԼՄ-ը անկախ է այս ոլորտներից յուրաքանչյուրի օրակարգերից և, որպես այդպիսին, ի վիճակի է պահպանելու իր միասնականությունը՝ աջակցելու կրթության և ուսուցման ոլորտի շահառուների միջև բանակցությունների ընթացքին, որոնց միջև երբեմն տեղի է ունենում շահերի բախում:

ՀԱՈԼՄ-ի ակտը հնարավորություն ստեղծող օրենսդրություն է. այն «վերևից» չի թելադրում նախագծի մանրամասները, այլ թույլ է տալիս ԱՈՇ-ի մշակումը՝ որպես սոցիալական կառուցվածքի, որի իմաստը բանակցվել և շարունակելու է բանակցվել մարդկանց կողմից մարդկանց համար: Դա տարբեր տեսակետներ ներկայացնող տարբեր սոցիալ-տնտեսական կարգավիճակի հարավ աֆրիկացիների փորձի, մտածողության և գործնականի սինթեզ է: Այս կառուցվածքի հիմնաքարը ժողովրդավարական մասնակցությունն է, մտավոր ուսումնասիրությունը և ռեսուրսների առկայությունը, հասկացություններ, որոնք կենտրոնական են ԱՈՇ-ի ՀԱՈԼՄ-ի կողմից մշակմանն ու իրականացմանը:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Դանիական որակավորման համակարգը ըստ մակարդակների և կրթական ոլորտների ISCED-ի դասակարգմանը հետևելով:

Հավելված 10. Ընտրված որակավորման համակարգեր

Գծապատկեր 9: Դանիական հանրակրթական որակավորման համակարգը



*: ISCED levels maintained after reforms of 2003.
Source: Facts and Figures, Danish Ministry of Education 2002. Adapted by author.
** Prior Learning Assessment Recognition – Within the general higher education students may be accepted under the so-called Quota II for work, life, and liberal educational experiences.

Աղյուսակ 10. Ճապոնիայի հմտությունների ստուգման աստիճանները

Աստիճան	Պահանջվող անցողիկ հմտության մակարդակը և հարակից գիտելիքը		Ընտրության հիմնական պահանջները	Անցման վկայական շնորհող անձ
Հատուկ աստիճան	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված ղեկավարի կողմից		Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք՝ հմտությունների առաջին աստիճանի թեստն անցնելուց հետո	Առողջապահության, աշխատանքի և բարեկեցության նախարար
1-ին աստիճան	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված ավելի բարձր աստիճանի որակավորված աշխատողի կողմից		Առնվազն տասներկու տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Առողջապահության, աշխատանքի և բարեկեցության նախարար
2-րդ աստիճան	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված միջին աստիճանի որակավորված աշխատողի կողմից		Առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Պրեֆեկտուրալ կառավարիչ կամ նշանակված ստուգող մարմին
3-րդ աստիճան	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված տարրական աստիճանի որակավորված աշխատողի կողմից		Առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Պրեֆեկտուրալ կառավարիչ կամ նշանակված ստուգող մարմին
3-րդ աստիճան (Հազվադեպ)	Աստիճան, որը նախատեսված է արտասահմանցի ուսանողների և տեխնիկական պրակտիկանտների համար	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված տարրական աստիճանի որակավորված աշխատողի կողմից	Առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Պրեֆեկտուրալ կառավարիչ
Տարրական 1-ին աստիճան		Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ հիմնական աշխատանք կատարելու համար	Առնվազն ութ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Պրեֆեկտուրալ կառավարիչ
Տարրական 2-րդ աստիճան		Հիմնական հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ հիմնական	Առնվազն մչորս ամսվա աշխատանքային փորձ ունեցող անձիք	Պրեֆեկտուրալ կառավարիչ

		աշխատանք կատարելու համար		
Առանձին աստիճան	Հմտության աստիճան և հարակից գիտելիք՝ սովորաբար պահանջված ավելի բարձր աստիճանի որակավորված աշխատողի կողմից		Երեքից հինգ տարի աշխատանքային փորձ ունեցող անձիք՝ կախված մասնագիտությունից	Առողջապահության, աշխատանքի և բարեկեցության նախարար

Գծապատկեր 10: Հունական կրթական համակարգը